4987

Պ-ոՇի-Ռուստով
1918

059
Ք-45

2010

200 11

# ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՅՑ.

**1919.**

243

059
Բ.45

059 / Բ-45

# ՍԵՂԱՆԻ

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐՈՎ

## 1919 թ.

# ՕՐԱՑՈՅՑ

Կազմեցին ( Ռ. ա. ք. Բէկգիւլեանց
( Ն. ք. Աբրահամեանց

29725-Ա-Հ

Ռոստով Դօնի-վրայ.
Արագատիպ Նշ. Մեսրովբեանց.
1918 թ.

13596-58

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Օրացոյցը այն միակ գիրքն է, որ մեծ տարածում ունի հայ ժողովրդի մէջ։ Նա հաւասարապէս մուտք է գործում թէ հարստի ապարանքը և թէ բանւորի նկուղն ու գիւղացու խրճիթը։ Այդ է պատճառը, որ օրացոյց կազմողները ամենից աւելի հնարաւորութիւն ունեն նրա միջոցով շատ օգտակար գիտելիքներ մատակարարել ժողովրդական մասսային։ Սակայն մեր մէջ ևս օրացուցային գրականութիւնը շահագործման մի աղբիւր է շատերի համար. օրացոյց կազմողները յենւելով ժողովրդի նախապաշարմունքների վրայ լցնում են այն զանազան գուշակութիւններով և երազահաններով, որով և շահագործում են ժողովրդի տգիտութիւնը իրանց գրպանի օգտին։ Ժամանակ է, որ գոնէ այս XX դարու քաղաքական և մտաւոր յեղաշրջումից յետոյ մեր օրացոյցները փոխանակ երազահանների և գուշակութիւնների մատակարարէին ժողովրդին հանրամատչելի և առողջ գրական, պատմական և գիտական նիւթեր։ Մամուլի և մանաւանդ գիւղական ղեկավար շրջանների պարտքն է կռուել այդ վնասակար երեւոյթի դէմ։

Լոյս ընծայելով Ա. տարին մեր օրացոյցը, դժբախտաբար քաղաքական պայմանների շնորհիւ առաջացած հաղորդակցութեան խզումը մեզ հնարաւորութիւն չտուեց մեր ցանկացածի պէս տալ բազմակողմանի բովանդակութեամբ յաւելուածային բաժին։ Յետագայ տարիներում, եթէ պայմանները ներեն մենք կաշխատենք աւելի հարստացնել մեր օրացոյցը հետաքրքիր և օգտակար նիւթերով, իսկ գինը մատչելի դարձնել։



ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ՇԱՐԺԱԿԱՆ ՏՕՆԵՐԸ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ։

Օր ծննդեան Յունւ. 6
Միջոց ուտիք օրեր ,, 22
Բարեկ. Առաջ. պահ. ,, 27
Բուն բարեկ. Փետր. 17
Զատիկ ապրիլ. 7
Համբարձում մայիս 16
Հոգեգալուստ և Բարեկ. ,, 26
Եղիական պահոց
Բարեկ. Լուսաւ. պհ. յուն. 16
միջոց ուտիք օրեր 15
Բարեկ. Վարդ. պհ. յուլ. 7
Վարդավառ ,, 14
Միջոց ուտիք 4 շաբաթ։
Բարեկ. Աստծ. պհ. օգոս. 11
Վերափոխումն Աստծ. ,, 18
Միջոց ուտիք 2 շաբ.
Բարեկ. ս. Խաչի պհ. սեպ. 8
Խաչվերաց սեպ. 15
Միջոց ուտիք մի շաբաթ.
Բարեկ. Վարագ. խաչի սեպ. 22
ս. Գէորգի տօն սեպ. 28
Միջոց ուտիք 7 շաբաթ.
Բարեկ. Յիսնակի պհ. նոյե. 17
Միջոց ուտիք 2 շաբաթ.
Բարեկ. ս. Յակոբայ պհ. դեկ. 8
Միջոց ուտիք 16 օր.
Բարեկ. Ծննդեան պհ. դեկ 29

Գիր տարւոյն . . . Զ.
Եօթներեակ . . . . Բ.
Վերադիր . . . . Թ.
Տանուտէրն . . . . Կշիռն
Փրկչական թւակ. . 1919
Հայոց թւակ։ . . . ՌՅԿԸ

## ՊԱՀՔԻ ԽՈՐՀՈՒՐԴՆ ԱՐԳԵԼՈՒՄ Է

1 Կիրակի, Չորեքշաբթի և ուրբաթ օրերը։
2 Հինգ տաղաւարների մեռելոցներին
3 Քրիստոսի Ծննդեան, Անւանակոչութեան Տեառընդառաջի, Աւետման և Համբարձման օրերը։
4 մեծ պասի օրերին և Զատկական շաբաթը, այսինքն բուն բարեկենդանից մինչև Նոր կիրակիի երկուշաբթի օրը։
5 Առաջաւորաց, վարդավառի, Յիսնակաց և Ծննդեան շաբաթապահերի առաջին 5 օրերը

ծանօթ. Եկեղեցական օրը սկսւում է նախընթաց օրը երեկոյեան ժամերգութիւնից յետոյ և տեւում է մինչև միւս օրւայ երեկոյեան ժամերգութեան վերջը։

Հնգամեայ Զատկական աղիւսակ

| Թուական | 1919 | 1920 | 1921 | 1922 | 1923 |
|---|---|---|---|---|---|
| Կիրակէ | ապրիլ 7 | մարտ 29 | ապրիլ 18 | ապրիլ 3 | մարտ 26 |



# ՅՈՒՆՈՒԱՐ

**1919 Թ.** **31 ՕՐ**

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 1 | 14 | Գշ. գձ. գ. օր Ծննդեան պահ. ԿԱՂԱՆԴ և ՏԱՐԵՄՈՒՏ 1919 թւակ. Քրիստոսի։ | 11 |
| 2 | 15 | Դշ. գկ. դ. օր Ծննդ. պահ. | 12 |
| 3 | 16 | Եշ. աձ. ե. օր Ծննդ. պահ. | 13 |
| 4 | 17 | Ուրբ ակ. զ. օր Ծննդ. պահ. | 14 |
| 5 | 18 | Շաբ. բձ. ՃՐԱԳԱԼՈՅՑ ծննդ. և ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ. երեկոյեան նաւակատիկ, և նախատօնակ և ուտիք է 8 օր. | 15 |
| | | լման լուսնի | |
| 6 | 19 | † Կիւր. բկ. ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ և ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ գկնի պատար. հանդէս Ջրօրհն. | 16 |
| 7 | 20 | † Բշ. գձ. բ. օր Ծննդեան յիշատակ մեռելոց։ | 17 |
| 8 | 21 | Գշ գկ. գ. օր Ծննդեան։ | 18 |
| 9 | 22 | Դշ. գձ դ. օր Ծննդեան։ | 19 |
| 0 | 23 | Եշ գկ. ե. օր Ծննդեան։ | 20 |
| 1 | 24 | Ուրբ. աձ զ. օր Ծննդեան։ | 21 |
| 12 | 25 | Շաբ. ակ. է. օր Ծննդեան։ | 22 |
| 13 | 26 | † Կիւր. բձ ը. օր Ծննդեան. ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ. նախատօնակ։ | 23 |
| 14 | 27 | Բշ. բկ. ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ։ | 24 |
| 15 | 28 | Գշ. գձ. Սրբոյն Պետրոսի հայրապետին, Վլասայ եպիսկոպոսին և Արիստոմեայ սարկաւագին։ | 25 |
| 16 | 29 | Դշ. գկ. պահք։ | 26 |

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 17 | 30 | Եշ. դձ. Սրբոյն Անտոնի ճգնաւորին։ | 27 |
| 18 | 31 | Ուրբ. դկ. պահք. | 28 |
| | | **ՆՈՐ ՏՕՄԱՐ ՓԵՏՐՈՒԱՐ** | |
| 19 | 1 | Շաբ. աձ. Սրբոյն Թէոդոսի թագաւորին և մանկ. Եփեսոսս։ | 29 |
| 20 | 2 | † Կիւր. ակ. ա. գկնի Ծննդ. | 30 |
| | | ծնունդ լուսնի | |
| 21 | 3 | Բշ. բձ. Սրբ. Կիրակոսի և մօրն նորա Յուղիտայի և սրբոց վկայիցն Գորդիոսի, Պօղիկտոսի և Գրիգորիսի։ | 1 |
| 22 | 4 | Գշ. բկ. Սրբ. Վահանայ Գողթնացւոյն և Եւգինեայ կուսին և հօրն նորա Փիլիպպոսի և մօրն Կզօղեայ և երկուց եղբարցն Սերգեայ և Արիգոնի և երկուց ներքինացն։ | 2 |
| 23 | 5 | Դշ. գձ. պահք. | 3 |
| 24 | 6 | Եշ. գկ. Սրբ. ճգնաւորացն Տրիփոնի, Պարսամայ և Ոնոփրիոսի։ | 4 |
| 25 | 7 | Ուրբ. դձ. պահք. | 5 |
| 26 | 8 | Շաբ. դկ. սրբ. հայրապետացն Աթանասի և Կիւրղի։ | 6 |
| 27 | 9 | † Կիւր. աձ. բ. գկնի Ծննդ. բարեկ. Առաջաւորաց պահոց։ | 7 |
| 28 | 10 | Բշ. ակ. ա. օր Առաջ. պահ. | 8 |
| 29 | 11 | Գշ. բձ. բ. օր Առաջ. պահ։ | 9 |
| 30 | 12 | Դշ. բկ. գ. օր Առաջ. պահ. | 10 |
| 31 | 13 | Եշ. գձ. դ. օր Առաջ պահ. | 11 |

**Յունուարի 1-ից մինչև 31-ը օրն երկարել է 1 ժ. 55 ր.**

# ՓԵՏՐՒԱՐ

**1919 Թ.** **28 ՕՐ**

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 1 | 14 | Ուրբ. գկ. ե. օր առաջ պահոց: Յիշատակ Յովնանու. մարգարէին: | 12 |
| 2 | 15 | Շաբ. գձ. Սրբ. Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին և 14 զինւորացն: | 13 |
| 3 | 16 | † ԿԻՐ. գկ.գ. գկնի ծննդեան Լրումն լուսնի | 14 |
| 4 | 17 | Բշ. աձ. Սրբ. Առաքմեանց զօրավարացն և Մարկոսի եպիսկոպոսին, Պիոնի քահանային, Կլւղի և Բենիամինի սարկաւագացն և սրբոց վկայիցն Արզմնեհի, Ոմիզդանայ և Սահէնի: | 15 |
| 5 | 18 | Գշ. ակ. Սրբ. Սուքիասեանց վկայիցն: | 16 |
| 6 | 19 | Դշ. բձ. պահք. | 17 |
| 7 | 20 | Եշ. բկ. Սրբ Ոսկեանց քահանայից: | 18 |
| 8 | 21 | Ուրբ. գձ. պահք: | 19 |
| 9 | 22 | Շաբ. գկ. Սրբ. ԽԱՍԱԼԱԿԱՑ ՊԱՐԹԵՒԻ հայրապետին մերոյ: | 20 |
| 10 | 23 | † ԿԻՐ. դձ. գ. գկնի ծննդեան: Երեկ. Նախատօնակ | 21 |
| 11 | 24 | † Բշ. դկ. Սրբոց ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑՆ մերոց 1036 վկայից, որք կատարեցան ի մեծ պատերազմին: Յիշատակ մեռելոց և Տօն Ազգային. երեկ. Նախատօնակ: | 22 |
| 12 | 25 | † ԳՇ. աձ. Սրբոց Ղեւոնդեանց քահանայից: | 23 |
| 13 | 26 | Դշ.ակ. պահք: Նախատօնակ: | 24 |

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 14 | 27 | † ԵՇ. բձ. ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ | 25 |
| 15 | 28 | Ուրբ. բկ. պահք: | 26 |
| | | **ՆՈՐ ՏՈՄԱՐ ՄԱՐՏ** | |
| 16 | 1 | Շաբ. գձ. Կ.Պոլսոյ սր. ժողովոյն 150 հայրապետացն: | 27 |
| 17 | 2 | † ԿԻՐ. գկ. ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ: | 28 |
| 18 | 3 | Բշ. աձ. ա. օր մեծի պահոց: | 29 |
| | | Ծնունդ լուսնի | |
| 19 | 4 | Գշ. ակ. բ. օր մեծ. պահ. | 1 |
| 20 | 5 | Դշ. բձ. գ. օր մեծ. պահ. | 2 |
| 21 | 6 | Եշ. բկ. դ. օր մեծ. պահ. | 3 |
| 22 | 7 | Ուրբ. գձ. ե. օր մեծ. պահ | 4 |
| 23 | 8 | Շաբ. գկ. զ. օր մեծ. պահ. Սրբ. Թէոդորոսի զօրավարին | 5 |
| 24 | 9 | † ԿԻՐ. դձ. բ. 40 օրեայ պահոց: | 6 |
| 25 | 10 | Բշ. դկ. ը. օր մեծ. պահ. | 7 |
| 26 | 11 | Գշ. աձ. թ. օր մեծ. պահ | 8 |
| 27 | 12 | Դշ. ակ. ժ. օր մեծ. պահ. | 9 |
| 28 | 13 | Եշ. բձ. ժա. օր մեծ. պահ. | 10 |

Փետրուարի 1-էն մինչև 28-ը օրն երկարել է 2 ժամ 7 րոպէ:



# ՄԱՐՏ

**1919 Թ.** **31 ՕՐ**

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 1 | 14 | Ուրբ.բկ ժբ.օր մեծ. պահ. | 11 |
| 2 | 15 | Շաբ. գձ ժգ օր մեծ. պահ Սր. Կիւրղի Երուսաղէմայ հայրապետին և միւս Կիւրղի եպիսկոպոսին և մօրն նորա Աննայի: | 12 |
| 3 | 16 | † ԿԻՐ. գկ. գ. Տնտեսնորդական պահոց. (Անառ.կ.) | 13 |
| 4 | 17 | Բշ. դձ. ժե. օր մեծ. պահ. | 14 |
| 5 | 18 | Գշ. դկ. ժզ. օր մեծ. պահ. | 15 |
| | | Լրումն լուսնի | |
| 6 | 19 | Դշ. աձ. ժէ. օր մեծ. պահ. | 16 |
| 7 | 20 | Եշ. ակ. ժը. օր մեծ. պահ. | 17 |
| 8 | 21 | Ուրբ. բձ. ժթ. օր մեծ. պահ. | 18 |
| 9 | 22 | Շաբ. բկ. ի. օր մեծ. պահ. Սրբ. հայրապետացն՝ Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին և Յովհաննու Օձնեցւոյ և վարդապետացն Յովհաննու Որոտնեցւոյ և Գրիգորի Տաթևացւոյ: Գարնանամուտ. օր եւ գիշեր հաւասար. օրն սկսած է երկարել իսկ գիշերը կարճանալ. | 19 |
| 10 | 23 | † ԿԻՐ. գձ. դ. 40 օրեայ. պահ. (Տնտեսին) | 20 |
| 11 | 24 | Բշ. գկ իբ. օր մեծ պահ. | 21 |
| 12 | 25 | Գշ. դձ. իգ. օր մեծ. պահ. | 22 |
| 13 | 26 | Դշ. դկ իդ. օր մեծ. պահ. | 23 |
| 14 | 27 | Եշ. աձ. իե. օր մեծ. պահ. | 24 |
| 15 | 28 | Ուրբ. ակ. իզ. օրմեծ. պահ. | 25 |
| 16 | 29 | Շաբ. բձ. իէ. օր մեծ. պահ. Սրբ. Մանկ. քառասնից որք ի Սեբաստիա կատարեցան: | 26 |

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 17 | 30 | † ԿԻՐ. բկ. ե. 40 օր. պահ: | 27 |
| 18 | 31 | Բշ. գձ. իթ. օր մեծ. պահ. | 28 |
| | | **ՆՈՐ ՏՈՄԱՐ ԱՊՐԻԼ** | 29 |
| 19 | 1 | Գշ. գկ. լ. օր մեծ. պահ. | |
| 20 | 2 | Դշ. դձ. լա. օր մեծ. պահ. | 30 |
| | | Ծնունդ լուսնի | |
| 21 | 3 | Եշ. դկ. լբ. օր մեծ պահ. | 1 |
| 22 | 4 | Ուրբ աձ լգ. օր մեծ. պահ. | 2 |
| | | Երեկ. Նախատօնակ: | |
| | | բացւում է սեղ. վարագոյրը | |
| 23 | 5 | † ՇԱԲ ակ. լդ. օր մեծ պահ. Սրբ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ մուտն ի վիրապ (պատար վերջը ծածկել սեղանը) | 3 |
| 24 | 6 | † ԿԻՐ. բձ. Զ. 40 օրեայ պահոց: | 4 |
| 25 | 7 | Բշ բկ լզ. օր մեծ. պահ. | 5 |
| 26 | 8 | Գշ գձ. լէ. օր մեծ. պահ. | 6 |
| 27 | 9 | Դշ. գկ. լը. օր մեծ. պահ. | 7 |
| 28 | 10 | Եշ գձ լթ. օր մեծ. պահ. | 8 |
| 29 | 11 | Ուրբ. դկ. խ օր մեծ. պահ. | 9 |
| 30 | 12 | Շաբ. աձ խա. օր մեծ պահ Յիշ. Յարութեան Ղազարու: (երեկ. բացւում է սեղանի վարագ.) | 10 |
| [illegible] | 13 | † ԿԻՐ.ակ. ԾԱՂԿԱԶԱՐԴ: Երեկ. դռնաբացէք: | 11 |

Մարտի 1-էն մինչև 31-ը օրն երկարել է 2 ժ. 24 ր.

# ԱՊՐԻԼ

**1919 Թ.** **30 ՕՐ**

| Հ | Ն | | Լ. |
|---|---|---|---|
| 1 | 14 | Աւագ բշ. բձ. պահք։ | 12 |
| 2 | 15 | Աւ. գշ. բկ. պահք։ Երեկ. յիշատակ տասն կուսանաց։ | 13 |
| 3 | 16 | Աւ. դշ. գձ. պահք։ | 14 |
| 4 | 17 | † Աւ. ԵՇ. գկ. պահք։ ՅԻՇԱՏԱԿ ԸՆԹՐԵԱՑ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ։ Երեկ. Ոտնալուայ։ | 15 |
| | | *Աւագ լրումն լուսնի* | |
| 5 | 18 | Աւ. Ուրբ. դձ. պահք. ՅԻՇԱՏԱԿ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ԵՒ ԽԱՉԵԼՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ։ Երեկ. Թափոր Թաղման։ | 16 |
| 6 | 19 | Աւ. Շաբ. դկ. ՃՐԱԳԱԼՈՅՍ ԶԱՏԿԻ ԵՒ ՆԱԽԱԿԱՏԻՔ երեկ. նախատօնակ։ | 17 |
| 7 | 20 | † ԿԻՐ. աձ. ԶԱՏԻԿ. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ԵՒ ԱՒԵՏՈՒՄՆ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ։ Ուտիք է մինչև Համբարձ. | 18 |
| 8 | 21 | † ԲՇ. ակ. բ. օր Զատկի։ Յիշատակ մեռելոց։ | 19 |
| 9 | 22 | † ԳՇ. բձ. գ. օր Զատկի։ | 20 |
| 10 | 23 | Դշ. բկ. դ. օր Զատկի։ | 21 |
| 11 | 24 | Եշ. գձ. ե. օր Զատկի։ | 22 |
| 12 | 25 | Ուրբ. գկ. զ. օր Զատկի։ | 23 |
| 13 | 26 | Շաբ. դձ. է. օր Զատկի։ Յիշատակ գլխատման ս. Յովհաննու Մկրտչի։ | 24 |
| 14 | 27 | † ԿԻՐ. դկ. բ. Նոր Կիրակի ( կրկնազատիկ։) | 25 |
| 15 | 28 | Բշ. աձ. թ. օր Յինանց։ | 26 |

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 16 | 29 | Գշ. ակ. ժ. օր Յինանց | 27 |
| 17 | 30 | Դշ. բձ. ժա. օր Յինանց։ | 28 |
| | | **ՆՈՐ ՏՈՄԱՐ ՄԱՅԻՍ** | |
| | | *Ծնունդ լուսնի* | |
| 18 | 1 | Եշ. բկ. ժբ. օր Յինանց։ | 29 |
| 19 | 2 | Ուրբ. գձ. ժգ. օր Յինանց։ | 1 |
| 20 | 3 | Շաբ. գկ. ժդ. օր Յինանց։ | 2 |
| 21 | 4 | ԿԻՐ. դձ. գ. Աշխարհամատրան (կանաչ կիրակի։) | 3 |
| 22 | 5 | Բշ. դկ. ժզ. օր Յինանց։ | 4 |
| 23 | 6 | Գշ. աձ. ժէ. օր Յինանց։ | 5 |
| 24 | 7 | Դշ. ակ. ժը. օր Յինանց։ | 6 |
| 25 | 8 | Եշ. բձ. ժթ. օր Յինանց։ | 7 |
| 26 | 9 | Ուրբ. բկ.ի. ժդ. օր Յինանց։ | 8 |
| 27 | 10 | Շաբ գձ. իա. օր Յինանց։ | 9 |
| 28 | 11 | † ԿԻՐ. գկ. դ. (Կարմ. կիր.) | 10 |
| 29 | 12 | Բշ. դձ իգ. օր Յինանց։ | 11 |
| 30 | 13 | Գշ դկ իդ. օր Յինանց։ | 12 |

Ապրիլի 1-ից մինչև 30-ը օրն երկարել է 2 ժ. 8 ր.



# ՄԱՅԻՍ

**1919 Թ.** **31 ՕՐ**

| Հ | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 1 | 14 | Դշ. աձ. իե. օր յինանց։ | 13 |
| 2 | 15 | Եշ. ակ. իզ. օր յինանց։ | 14 |
| 3 | 16 | Ուրբ. բձ. իէ. օր յինանց։ | 15 |
| | | *Լրումն լուսնի* | |
| 4 | 17 | Շաբ. բկ. իը. օր յինանց։ | 16 |
| 5 | 18 | † ԿԻՐ. գձ.ե. Տօն Երևման ս. Խաչի։ | 17 |
| 6 | 19 | Բշ. գկ. լ. օր յինանց։ | 18 |
| 7 | 20 | Գշ. դձ. լա. օր յինանց։ | 19 |
| 8 | 21 | Դշ. դկ. լբ. օր յինանց։ | 20 |
| 9 | 22 | Եշ. աձ. լգ. օր յինանց։ | 21 |
| 10 | 23 | Ուրբ. ակ. լդ. օր յինանց։ | 22 |
| 11 | 24 | Շաբ. բձ. լե. օր յինանց։ | 23 |
| 12 | 25 | † ԿԻՐ. բկ Զ. յետ Յարութեան։ | 24 |
| 13 | 26 | Բշ. գձ. լէ. օր յինանց։ | 25 |
| 14 | 27 | Գշ. գկ. լը. օր յինանց։ | 26 |
| 15 | 28 | Դշ. դձ. լթ. օր յինանց։ | 27 |
| 16 | 29 | Եշ. դկ. խ. օր յինանց։ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ։ | 28 |
| | | (վիճակ) | |

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 17 | 30 | Ուրբ. աձ. խա. օր Յինանց. | 29 |
| | | *Ծնունդ լուսնի* | |
| | | **ՆՈՐ ՏՈՄԱՐ ՅՈՒՆԻՍ** | |
| 18 | 31 | Շաբ. ակ. խբ. օր Յինանց։ | 1 |
| 19 | 1 | † ԿԻՐ. բձ. է. (Երկրորդ Ծաղկազարդ) | 2 |
| 20 | 2 | Բշ. բկ. խդ. օր Յինանց։ | 3 |
| 21 | 3 | Գշ. գձ. խե. օր Յանանց։ | 4 |
| 22 | 4 | Դշ. գկ. խզ. օր Յինանց։ | 5 |
| 23 | 5 | Եշ դձ. [illegible] անց։ | 6 |
| 24 | 6 | Ուրբ. դկ. խը. օր Յինանց։ | 7 |
| 25 | 7 | Շաբ. աձ. խթ. օր Յինանց։ | 8 |
| 26 | 8 | † ԿԻՐ. ակ. ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ (Պենտեկոստէ) 50 օր Զատկի։ Բարեկենդան Եղիական պահ. | 9 |
| 27 | 9 | Բշ. բձ. բ. օր Հոգեգալստեան. պահոց։ | 10 |
| 28 | 10 | Գշ. բկ. գ. օր Հոգ. պահ։ | 11 |
| 29 | 11 | Դշ. գձ գ. օր Հոգ. պահ. | 12 |
| 30 | 12 | Եշ. գկ. ե. օր Հոգ. պահ։ | 13 |
| 31 | 13 | Ուրբ. դձ. զ. օր Հոգ. պահ։ | 14 |

# ՅՈՒՆԻՍ

**1919 Թ.** **30 ՕՐ**

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 1 | 14 | Շաբ. դկ. է օր Հոգ: | 15 |
| | | *Լրումն լուսնի* | |
| 2 | 15 | † ԿԻՐ. աձ. Ա. Յարթ. (Յիշ. Եղիայի մարգ.) երեկ. Նախ | 16 |
| 3 | 16 | Բշ. ակ. Սրբ. կուս. Հռիփսիմեանց: երեկ. Նախտ. | 17 |
| 4 | 17 | Գշ. բձ. Սրբ. Գայեանեանց: | 18 |
| 5 | 18 | Դշ. բկ. պահք: Նախատ. | 19 |
| 6 | 19 | Եշ. գձ. Սրբ. Յովհաննու Կարապ. և Աթանագինեայ եպ. | 20 |
| 7 | 20 | Ուրբ գկ. պահք: Նախատ. | 21 |
| 8 | 21 | † ՇԱԲ. դձ. Սրբ. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ մերոյ ելնի վիրապէն. | 22 |
| 9 | 22 | + ԿԻՐ. դկ. բ. զկնի Հոգ. Տօն կաթուղիկէ Ս.Էջմիածնի. | 23 |
| | | *ամառնամուտ և արեւադարձ. օրն սկսում է կարճանալ, իսկ գիշերը երկարել:* | |
| 10 | 23 | Բշ. աձ Սրբ. մանկ. Բէթղէհէմի և Ակակիոսի վկ. Մովկիմայ քահ. և Կոտրատիոսի զին | 24 |
| 11 | 24 | Գշ. ակ. Սրբ. կուս. Նունեայ և Մանեայ: | 25 |
| 12 | 25 | Դշ. բձ. պահք: | 26 |
| 13 | 26 | Եշ. բկ. Սրբ. իշխ. Սահակայ և Յովսէփայ և Սարգսի և Բագոսի. | 27 |
| 14 | 27 | Ուրբ. գձ. պահք: | 28 |
| 15 | 28 | Շաբ. գկ. Սրբ. Ներսէսի մեծի հայր. մերոյ և Խադայ եպ. | 29 |
| 16 | 29 | † ԿԻՐ. դձ. գ. զկնի Հոգ. բարեկ. Լուսաւորչի պահոց. | 30 |

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| | | *Ծնունդ լուսնի* | |
| 17 | 30 | Բշ. դկ. պահք. Սրբ. Եպիփանու կիպրացւոյն, Բաբիլայ հայր. և 3 աշակ. նորին. | 1 |
| 18 | 1 | Գշ. աձ. պահք. Սրբ. Կոստանդիանոսի թագ. և մօրն նորայ Հեղինեայ. | 2 |
| | | **ՆՈՐ ՏՕՄԱՐ ՅՈՒԼԻՍ** | |
| 19 | 2 | Դշ. ակ. պահք. | 3 |
| 20 | 3 | Եշ. բձ. պահք. Սրբ. Թէոդիտոսի Գաղատացւոյն թալիեայ բժշ. և եօթն կուս. որք յ Անկիւրեայ կատար. | 4 |
| 21 | 4 | Ուրբ. բկ. պահք: Նախատ. | 5 |
| 22 | 5 | † ՇԱԲ. գձ. Գիւտ Նշխարաց սրբոյն ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ մերոյ: | 6 |
| 23 | 6 | † ԿԻՐ. գկ. դ. զկնի Հոգ. | 7 |
| 24 | 7 | Բշ. դձ. Սրբ. վկայից Անտոնինոսի, Թէոփիլոսի, Անիքտոսի և Փոտինոսի: | 8 |
| 25 | 8 | Գշ.դկ.Սրբ. Դանիէլի մարգ. և երից մանկ. Սեդրակայ, Միսակայ եւ Աբեդնագովի: | 9 |
| 26 | 9 | Դշ. աձ. պահք: Նախատ. | 10 |
| 27 | 10 | Եշ. ակ.Սրբ. Թարգմանչացն մերոյ ՍԱՀԱԿԱՅ և ՄԵՍՐՈՎԲԱՅ | 11 |
| 28 | 11 | Ուրբ. բձ. պահք: | 12 |
| 29 | 12 | Շաբ. բկ Սրբ. Տրդատայ թագ. մերոյ և Աշխէն տիկն. և Խոսրովիդխտոյն: Նախատ. | 13 |
| 30 | 13 | † ԿԻՐ. գձ. ե. զկնի Հոգ Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի | 14 |

*Յունիսի 1-ից մինչեւ 30-ը օրն կարժացել է ., ժամ 22ր:*



# ՅՈՒԼԻՍ

**1919 Թ.** **31 ՕՐ**

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 1 | 14 | Բշ.գկ. սրբ. Կալիստրատոսի և 49 վկ.և Ղունկիանոսի քահ. | 15 |
| | | *Լրումն լուսնի* | |
| 2 | 15 | Գշ.դձ սրբ.Զաքարիա մարգ. | 16 |
| 3 | 16 | Դշ: դկ. պահք: | 17 |
| 4 | 17 | Եշ. աձ.սրբ. Եղիսէի մարգ. | 18 |
| 5 | 18 | Ուրբ. ակ. պահք. | 19 |
| 6 | 19 | Շաբ. բձ սրբ. երկոտասան Առաք. Կ-սի և Պօղոսի երեքտասան առաքելոյն: | 20 |
| 7 | 20 | + ԿԻՐ. բկ. Զ. զկնի Հոգ. բարեկ. վարդ. պահոց: | 21 |
| 8 | 21 | Բշ. գձ ա. օր վարդ. պահ. | 22 |
| 9 | 22 | Գշ. գկ. բ. օր վարդ, պահ. | 23 |
| 10 | 23 | Դշ. դձ. գ. օր վարդ. պահ. | 24 |
| 11 | 24 | Եշ. դկ. դ. օր վարդ պահ. | 25 |
| 12 | 25 | Ուրբ աձ. ե.օր վարդ.պահ. | 26 |
| 13 | 26 | Շաբ.ակ. յիշ. ՏԱՊԱՆԱԿԻՆ ՀՆՈՅ և ՏՕՆ ՆՈՐՈՅՍ ՍԲ. ԵԿԵՂ. Նաւակատիք: | 27 |
| 14 | 27 | + ԿԻՐ. բձ. ՎԱՐԴԱՎԱՌ (միջոց ուտիք է չորս շաբաթ) եօթներորդ տարեդարձ Ս.Օծման Տ. Տ. Գէորգայ Ե. Սրբազնագոյն Կաթ. Ամենայնհայոց: | 28 |
| 15 | 28 | +ԲՇ.բկ.բ օր վարդ.Մեռելոց | 29 |
| 16 | 29 | Գշ. գձ. գ. օր վարդ. | 1 |
| | | *Ծնունդ լուսնի* | |
| 17 | 30 | Դշ. գկ. դ. օր վարդ. | 2 |
| 18 | 31 | Եշ. դձ. ե. օր վարդ. Ս. Եսայեայ մարգարէին: | 3 |
| | | **ՆՈՐ ՏՕՄԱՐ ՕԳՈՍՏՈՍ** | |
| 19 | 1 | Ուրբ.դկ.զ.օր վարդ.Նախատ. | 4 |

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 20 | 2 | † ՇԱԲ. աձ Սրբ. ԹԱԴԷՈՍԻ առաք.և Սանդխտոյ կուս. | 5 |
| 21 | 3 | † ԿԻՐ. ակ.բ.զկնի վարդ. | 6 |
| 22 | 4 | Բշ. բձ. Սրբ. Կիպրիանոսի եպ.և 45 վկաից և Սրբ.կուս. Յուստինեայ, Եփիմեայ և Քրիստինեայ: | 7 |
| 23 | 5 | Գշ. բկ. սրբ. Աթանագինեայ եպ. և 10 աշակ. և 5 վկ. | 8 |
| 24 | 6 | Դշ. գձ. պահք: | 9 |
| 25 | 7 | Եշ. գկ. ս. Նախահարցն Ադամայ, Աբէլի, Սէթայ, Ենովսայ, Ենովքայ, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամու, Իսահակայ, Յակովբայ, Յովսէփայ, Մովսիսի, Ահարոնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի, Սամփսոնի, Յեփթայեայ, Բարակայ, Գեդէօնի և այլոց սրբոց Նախահ. | 10 |
| 26 | 8 | Ուրբ. դձ. պահք: Նախատ. | 11 |
| 27 | 9 | Շաբ. դկ սրբ. Որդւոց և թոռանց սրբ. Գրիգորի Լուսաւորչին Արիստակ. Վրթանէսի Յուսկանն, Գրիգորիսի Դանիէլի: | 12 13 |
| 28 | 10 | † ԿԻՐ. աձ. գ. զկնի վարդ. | 14 |
| 29 | 1 | Բշ.ակ.սրբ.Մակաբայեցւոցն Եղիազարու քահ.և Շամունեայ և եօթն որդւոց: | 15 |
| 30 | 12 | Գշ. բձ. սրբ. երկոտասան մարգ. Ովսեայ, Ամովսեայ. Միքիայ, Յովելեայ, Աբդիու, Նաւումայ, Ամբակումայ, Յովնանու, Սոփոնեայ, Անգեայ, Զաքարեայ և Մաղաքեայ | 16 |
| 31 | 13 | Դշ. բկ. պահք: | |
| | | *Լրումն լուսնի* | |

*Յուլիսի 1-ից մինչեւ 31-ը օրն կարճացել է 1 ժ. 47 ր.*

# ՕԳՈՍՏՈՍ

**1919 Թ.** **31 ՕՐ**

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 1 | 14 | Եշ. գձ. սրբ. Սոփիայ և երից դստերացն Պիստոսի, Էլպիսի և Ագապի. | 17 |
| 2 | 15 | Ուրբ. գկ. պահք: | 18 |
| 3 | 16 | Շաբ. դձ. սրբ, Գրիգորի Աստուածաբանին: | 19 |
| 4 | 17 | † ԿԻՐ. գկ. գ. գկնի վարդ. | 20 |
| 5 | 18 | Բշ. աձ, սրբ. Եւգինէոսի, Մակարիոսի, Վալերիոսի, Կանդիտոսի և Ակիւղասայ: | 21 |
| 6 | 19 | Գշ. ակ, սրբ. Անդրէի զօրավարին և բանակի նորին, Կալինիկոսին և Դոմիտրեայ վկ. | 22 |
| 7 | 20 | Դշ. բձ. պահք: | 23 |
| 8 | 21 | Եշ. բկ. սրբ. Անդրիանոսի և կնոջն նորա Անատոլայ և Թէոդորոսի և Եւլեթիւրոսի վկ. | 24 |
| 9 | 22 | Ուրբ. դձ, պահք: | 25 |
| 10 | 23 | Շաբ. գկ. Ս. Եփեսոսի ս, ժողովոյն 200 հայր. | 26 |
| 11 | 24 | † ԿԻՐ. դձ. Ե. գկնի վարդ. բարեկ. Ա-ծնի պահոց: | 27 |
| 12 | 25 | Բշ. դկ. ա. օր Ա-ծնի պահոց: | 28 |
| 13 | 26 | Գշ. աձ. բ. օր Աստ. պահ. | 29 |
| 14 | 27 | Դշ. ակ. գ. օր Աստ. պահ. | 30 |
| | | *Ծնունդ լուսնի* | |
| 15 | 28 | Եշ. բձ. դ. օր Աստ. պահ | 1 |
| 16 | 29 | Ուրբ. բկ. ե. օր Աստ. պահ. | 2 |

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 17 | 30 | † ՇԱԲ. գձ. ՏՕՆ ՇՕՂԱԿԱԹԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ. ըստ տեսլեան Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ: Նաւակատիք, Նախ. 8 օր: | 3 |
| 18 | 31 | † ԿԻՐ. գկ. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ. սր. պատար. օրհնութիւն խաղողոյ: | 4 |
| 19 | 1 | † ԲՇ, դձ. բ. օր վերափոխման: Մեռելոց: | 5 |
| | | **ՆՈՐ ՏՕՄԱՐ ՍԵՊՏԵՄԲ.** | |
| 20 | 2 | Գշ. դկ. գ. | 6 |
| 21 | 3 | Գշ. աձ. դ. | 7 |
| 22 | 4 | Եշ. ակ. ե. | 8 |
| 23 | 5 | Ուրբ. բձ. զ. | 9 |
| 24 | 6 | Շաբ. բկ. է. | 10 |
| 25 | 7 | † ԿԻՐ. գձ. ը. ը. | 11 |
| 26 | 8 | Բշ. գկ. թ. | 12 |
| 27 | 9 | Գշ. դձ. սրբ. Յովակիմայ և Աննայի ծնողաց Ս. Աստ. և կանանց իւղաբերից: | 13 |
| 28 | 10 | Դշ դկ. պահք. | 14 |
| 29 | 11 | Եշ. աձ. Ս. Երեմիայ մարգարէին: | 15 |
| | | *Լրումն լուսնի* | |
| 30 | 12 | Ուրբ. ակ. պահք: | 16 |
| 31 | 13 | Շաբ. բձ. սրբ. Առաքելոյն Թովմայի, Յակոբայ եղմաւոնի: Նախատօնակ: | 17 |

(Vertical text beside 2–8: [illegible])

*Օգոստոսի 1-ից մինչև 31-ը օրն կարճացել է 2 ժ. 18 ր.*



# ՍԵՊՏԵՄԲԵՐ

**1919 Թ.** **30 ՕՐ**

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 1 | 14 | † ԿԻՐ. բկ. գ. գկնի վերափ. Գիւտ Գօտւոյ Ս. Աստուածածնի: | 18 |
| 2 | 15 | Բշ. գձ. Ս. Ստեփաննոսի Ուլնեցւոյն և վկարցն Գոհարինեայ, Ծամիդէսի, Տուքիկոսի և Ռատիկոսի: | 19 |
| 3 | 16 | Գշ գկ. Ս. Մարգարէիցն Եզեկիէլի, Եզրի, Զաքարիայի հօրն Յովհաննու Մկրտչի: | 20 |
| 4 | 17 | Դշ. դձ. պահք: | 21 |
| 5 | 18 | Եշ. դկ. Ս. Յովհաննու Կարապետին և Յորայ Արդարոյն: | 22 |
| 6 | 19 | Ուրբ. աձ. պահք: | 23 |
| 7 | 20 | Շաբ. ակ. Նիկիոյ ս. ժողովոյն 318 հայրապետացն: Նախատօնակ: | 24 |
| 8 | 2. | † ԿԻՐ. բձ. գ. գկնի վերափ. ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Ի յ ԱՆՆԱՅԷ: Բարեկենդան Ս. Խաչի պահոց | 25 |
| 9 | 22 | Բշ. բկ. ա. օր ս. Խաչի պահ | 26 |
| 10 | 23 | Գշ. գձ. բ. օր ս. ,, ,, Աշնանամուտ եւ հաւասարակած. օր եւ գիշեր հաւասար. | 27 |
| 11 | 24 | Դշ. գկ. գ. ս. օր Խաչի պահ. | 28 |
| 12 | 25 | Եշ. դձ. դ. օր ս. ,, ,, | 29 |
| 13 | 26 | Ուրբ. դկ ե. օր ս. ,, ,, | 1 |
| | | *Ծնունդ լուսնի* | |
| 14 | 27 | Շաբ. աձ. Տօն ս. եկեղեցւոյ ի Նաւակատիս ս. Խաչին: Նաւակատիկ: | 2 |
| 15 | 28 | † ԿԻՐ. ակ. ԽԱՉՎԵՐԱՑ: | 3 |

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 16 | 29 | † ԲՇ. բձ. Տօն Խաչի. Յիշատակ մեռելոց: | 4 |
| 17 | 30 | Գշ. բկ. Տօն եկեղեցւոյ, | 5 |
| 18 | 1 | Դշ. գձ. պահք: Տօն եկեղեց: | 6 |
| | | **ՆՈՐ ՏՕՄ. ՀՈԿՏԵՄԲ.** | |
| 19 | 2 | Եշ. գկ. Տօն եկեղեցւոյ: | 7 |
| 20 | 3 | Ուրբ. դձ. պահք: Տօն Խաչի: | 8 |
| 21 | 4 | Շաբ. դկ. Տօն Խաչի: | 9 |
| 22 | 5 | † ԿԻՐ. աձ. բ. գկնի ս. Խաչի: Բարեկենդան վարագայ ս. Խաչի | 10 |
| 23 | 6 | Բշ. ակ. պահք. սրբ. Մամասայ, Փիլիկտիմոնի և Սիմէօնի Սինակեցւոյն. | 11 |
| 24 | 7 | Գշ բձ, պահք սրբ. կուսանացն Փեփրոնեայ, Մարիանեայ և Շուշանայ դստերն Մեծին Վարդանայ: | 12 |
| 25 | 8 | Դշ. բկ. պահք: | 13 |
| 26 | 9 | Եշ. գձ. պահք: սրբ. հայրապետացն Բարսղամու, Անթիմոսի և Երանոսի: | 14 |
| 27 | 10 | Ուրբ. գկ. պահք: Նախտ. *Լրումն լուսնի* | 15 |
| 28 | 11 | † ՇԱԲ. դձ. սրբ. ԳԷՈՐԳԱՅ քաջամարտիկ զօրավարին Ազոքատոսի և Ռոմանոսի երգեցողին: Անուանակոչութիւն Նորին Վեհ. Սրբ. Կաթողիկոսի Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգայ Ե· | 16 |
| 29 | 12 | † ԿԻՐ. դկ. գ. գկնի ս. Խաչի: Տօն Վարագայ ս. Խաչի: մինչոց ուտիք եօթն շաբաթ է: | 17 |
| 30 | 13 | Բշ. աձ. սրբ. Դաւթի Դվնեցւոյն եւ. վկ. Ղամբէռ. եՂամբէւռ. | 18 |

*Սեպտեմբերի 1-ից մինչև 30-ը օրն կարճացել է 2 ժ. 17ր.*

# ՀՈԿՏԵՄԲԵՐ

**1919 Թ.** **31 ՕՐ**

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 1 | 14 | Գշ. ակ. սրբ. Եւստաթէոսի և կնոջն նորա Թէոփիստոսի և երկուց որդոցն· եւ սրբ. կուս. Երմոնեայ և Նեքտառինեայ: | 18 |
| 2 | 15 | Գշ. բձ. պահք: | 19 |
| 3 | 16 | Եշ. բկ. սրբ. իշխ. Սահակայ և Համազասպայ: | 20 |
| 4 | 17 | Ուրբ. գձ. պահք: | 21 |
| 5 | 18 | Շաբ. գկ. սրբ. 72աշակեր. Ք-սի. | 22 |
| 6 | 19 | † ԿԻՐ. դձ. գ. գիւտի Ս. Խաչի. | 23 |
| 7 | 20 | Բշ. դկ. սրբ. Փոկասու հայր. և Երմոնոսի հետեւողին առաքելոց | 24 |
| 8 | 21 | Գշ. աձ. սրբ. կուս. Թեկղի, Վառվառեայ և Պեղագեայ: | 25 |
| 9 | 22 | Դշ. ակ. պահք: | 26 |
| 10 | 23 | Եշ. բձ. Սրբ. Պանդալէոնի բժշ. Երմողեայ քահ. և Եւպրակսեայ կուսին: | 27 |
| 11 | 24 | Ուրբ. բկ. պահք: Նախատ. | 28 |
| 12 | 25 | † ՇԱԲ. գձ. սրբ. Թարգմանչաց վարդ· Մեսրովբայ, Եղիշէի, Մովսէսի քերթողին, Դաւթի Անյաղթ Փիլիսոփային Գրիգորի Նարեկացւոյն և Ներսէսի Կլայեցւոյն: | 29 |
| | | *Ծնունդ լուսնի* | |
| 13 | 26 | † ԿԻՐ. գկ. ե. գիւտի Ս. Խաչի: | 1 |
| 14 | 27 | Բշ. դձ. Գիւտ Նշխարաց Ս. Գրիգորիսի Աղուանից կաթ. և սրբ. հարցն Թաթուլ, Վարոսի, Թոմասու, Անտոնի և Կրօնիդեայ և 7 խոստովանողացն, որք ի լինալինեայ վանն կատարեցան: | 2 |
| 15 | 28 | Գշ. դկ սրբ. առաք. Անանիայի, Մատաթէի, Բառնաբայ, Փիլիպպոսի, Յովհաննու, Ձիւղայի և Սիւգիանոսի: | 3 |
| 16 | 29 | Դշ աձ. պահք: | 4 |
| 17 | 30 | Եշ. ակ սրբ. Դիոնիսիոսի Արիսպագացւոյն և առաք. Տիմոթէոսի և Տիտոսի | 5 |
| 18 | 31 | Ուրբ, բձ. պահք: | 6 |
| | | ՆՈՐ ՏՈՄԱՐ ՆՈՅԵՄԲ. | |
| 19 | 1 | Շաբ. բկ. ս. Աւետարանչացն Մատթ. Մարկ. Ղուկ. և Յովհան. | 7 |
| 20 | 2 | † ԿԻՐ. գձ. Զ. գիւտի Խաչի: | 8 |
| 21 | 3 | Բշ. գկ. սրբ. Ղունկիանոսի հարիւր, որ հաւատաց ի խաչելութիւն Ք-սի և Յովսէփայ Աստուածահօրն, Յովսէփայ Արեմաթացւոյն և բարեկամին Ք-սի Ղազարու և քերցն նորա Մարթայի և Մարիամու: | 9 |
| 22 | 4 | Գշ. դձ. սրբ. Թէոդիտոնի քահ. Զենոնի զին. Մակարայ, Եւդոքսեայ և Ռոմեայ: | |
| 23 | 5 | Դշ. դկ. պահք: | 10 |
| 24 | 6 | Եշ. աձ. ս. Խարիթեանց և վկ Արսենեայ և Քրիստափորի և կանանց Կալինիկ և Ակուլին. | 11 |
| 25 | 7 | Ուրբ. ակ. պահք: | 12 |
| 26 | 8 | Շաբ. բձ. սրբ Երկոտասան վարդ. Ոէթէոսի Դիոնիսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կիւրղի, Երուսաղեմացւոյն, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Աստուածաբանին, Եփրեմ Ասորւոյ, Բարսղի, Ներսէսի Կիպրիացւոյն, Յովհաննու Ոսկեբերանին և Կիւրղ Աղեքսանդ. | 13 |
| 27 | 9 | † ԿԻՐ. բկ. է. գիւտի Ս Խաչի: ԳԻՒՏ ԽԱՉ: *Լրումն լուսնի* | 14 |
| 28 | 10 | Բշ. գձ. սրբ Անաստասայ քահ. և Վարոսի և Թէոդորիայ, եւ որդոց եւ որք ընդ նմա կատ. | 15 |
| 29 | 11 | Գշ. գկ. սրբ. Հիպիրիքեանց. որք ի Սամուսատ կատ. եւ որդոյն Սուքիասեանս Սեբաստացւոյն, Բաբիլայ եւ 84 աշ. | 16 |
| 30 | 12 | Դշ. դձ. պահք: | 17 |
| 31 | 13 | Եշ. դկ. սրբ. Յովհ. Ոսկեբեր. | 18 |

Հոկտեմբերի 1-ից մինչև 31-ը օրն կարճացել է 2 ժ. 12ր.



# ՆՈՅԵՄԲԵՐ

**1919 Թ.** **30 ՕՐ**

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 1 | 14 | Ուրբ. աձ. պահք. | 20 |
| 2 | 15 | Շաբ. ակ. Տօն ամենայն սրբ. Հնոց և Նորոց Յայտնից և Անյայտ. | 21 |
| 3 | 16 | † ԿԻՐ. բձ. ը. գիւտի Խաչի: | 22 |
| 4 | 17 | Բշ. բկ. սրբ. Ստեփանոսի հռոմայ հայր. և քահ. և սարկ. և ժողովրդոցն: | 23 |
| 5 | 18 | Գշ. գձ սրբ. Ակիփսիմեայ եպ. և Յովսէփայ քահ. Այիթալայ սար. և Պղատոնի վկ, | 24 |
| 6 | 19 | Դշ. գկ. պահք: | 25 |
| 7 | 20 | Եշ. դձ. սրբ. հայր. Մետրոփանոսի և Պօղոսի խոստով. և սրբ. նոտար. Մարկիանոսի և Մարտիրոսի: | 26 |
| 8 | 21 | Ուրբ. դկ. պահք. Նախատ. | 27 |
| 9 | 22 | Շաբ. աձ. սրբոց հրեշտակապ· Գաբրիէլի և Միքայէլի և ամեն. զօրացն: | 28 |
| 10 | 23 | † ԿԻՐ. ակ. Թ. գիւտի խաչի | 29 |
| 11 | 24 | Բշ. բձ. ս. բ Մելիտոսի Անտիոքայ հայր. և Մինասայ եգիպ. և միւս Մելիտոսի եպ. Բուրայ քաղ և Ձինու սարկաւագին: | 30 |
| | | *Ծնունդ լուսնի* | |
| 12 | 25 | Գշ. բկ. սրբ. Դեմետրեայ վկ. և Բասիլիսկոսի քահ. | 1 |
| | | | 2 |
| 13 | 26 | Դշ. գձ. պահք: | 3 |
| 14 | 27 | Եշ. գկ. սրբ. Գուրիասայ, Սամոնասայ և Աբիբայ սարկ. Ռամանոսի միայնակեցին, Մանկանն խոստով. և Հիսիքոսի զինւորին: | 4 |
| 15 | 28 | Ուրբ. դձ. պահք: | 5 |
| 16 | 29 | Շաբ. դկ. սրբ. առաք. Անդրէի և Փիլիպպոսի: | |
| 17 | 30 | † ԿԻՐ. աձ. Ժ. գիւտի Ս. Խ. Բարեկ. Ցինակի պահ. | 6 |
| | | ՆՈՐ ՏՈՄ. ԴԵԿՏԵՄԲԵՐ | |
| 18 | 1 | Բշ. ակ. ա. օր յիսն. պահ. | 7 |
| 19 | 2 | Գշ. բձ. բ. օր յիսն. պահ. | 8 |
| 20 | 3 | Դշ. բկ. գ. օր յիսն. պահ. Նախատօնակ: | 9 |
| 21 | 4 | † ԵՇ. գձ. դ օր յիսն. պահ. ԸՆԾԱՅՈՒՄՆ ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Ի ՏԱՃԱՐՆ, | 10 |
| 22 | 5 | Ուրբ. գկ ե. օր յիսն. պահ. | 11 |
| 23 | 6 | Շաբ. դձ սրբ. Գրիգորի Սքանչելագործին, Նիկողայոսի և Միւռոնայ եպիսկոպոսին: | 12 |
| 24 | 7 | † ԿԻՐ. դկ. Ա. յիսն. | 13 |
| 25 | 8 | Բշ. աձ. սրբ. կուս Ցուլիանեայ և Վասիլուհւոյ և Արքահամու և Խորէնայ, Կոզմայի և Դամիանոսի և Աստուածատրոյ վկ. | 14 |
| 26 | 9 | Գշ. ակ սրբ. Ղունկիանոսի քահ. և Տարագրոսի, Պրօպոսի, Անդրոնիկոսի, Անեսիմեայ և այլ աշակերտացն Պօղոսի: | 15 |
| | | *Լրումն լուսնի* | |
| 27 | 10 | Դշ. բձ. պահք: | 16 |
| 28 | 11 | Եշ. բկ. սրբ. Կղեմայ հայր. և Բագարատայ Տոռոմենոյ եպ. | 17 |
| 29 | 12 | Ուրբ. գձ. պահք: Նախատ. | 18 |
| 30 | 13 | † ՇԱԲ գկ. սրբ. Առաք. եւ առաջին Լուսաւորչացն մերոց ԹԱԴԷՈՍԻ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍԻ: | 19 |

Նոյեմբերի 1-ից մինչև 30-ը օրն կարճացել է 1 ժ 24ր.

# ԴԵԿՏԵՄԲԵՐ

1919 Թ. 31 ՕՐ

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| 1 | 14 | † Կիր. գձ. բ. Ցիսնակի։ | 20 |
| 2 | 15 | Բշ. գկ. Սրբ. Գենարիոսի | 21 |
| | | եպ. Մերկուրիոսի զին. և Յա- | |
| | | կովբայ և Իրաւափառայ։ | |
| 3 | 16 | Գշ. աձ. Սրբ. Մինոսայ, | 22 |
| | | Երմոգինեայ և Գրաքոսի և | |
| | | կամաւոր աղք. Յովհաննու և | |
| | | Ալեքսիանոսի։ | |
| 4 | 17 | Դշ. ակ. պահք։ | 23 |
| 5 | 18 | Եշ. բձ. Սրբ. հարցն Եգիպ- | 24 |
| | | տացւոց Պօղոսի, Պօղայ, Մա- | |
| | | կարայ, Եւագրի, Յովհաննու | |
| | | Գբնեցւոյն, Յովհաննու Կար- | |
| | | ճահասակին, Նեղոսի, Արսէ- | |
| | | նի, Սիսիանու, Դանիէլի, | |
| | | Սրապիոնի, Մակարիոսի, Պի- | |
| | | գէնի և այլոց սրբոց հարցն։ | |
| 6 | 19 | Ուրբ. բկ. պահք։ | 25 |
| 7 | 20 | Շաբ. գձ. Սրբ. Նիկողայոսի | 26 |
| | | Զմիւռնացւոյ Սքանչելագործ | |
| | | հայրապետին։ | |
| 8 | 21 | † Կիր. գկ. Գ. գկնի Ցիսն. | 27 |
| | | Նախատօնակ։ Բարեկենդան | |
| | | Ս. Յակովբայ. պահք։ | |
| 9 | 22 | Բշ. դձ. պահ. ՅՂՈՒԹԻՒՆ | 28 |
| | | Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Ի յ ԱՆ- | |
| | | ՆԱՅԷ։ | |
| | | Ձմեռնամուտ. օրը սկսում է եր- | |
| | | կարել, իսկ գիշերը կարճանալ. | |
| 10 | 23 | Գշ. դկ. պահ. Սրբ. Կոռնե- | 29 |
| | | լիոսի հարիւրապետին, և | |
| | | Շմաւոնի ազգականին Ք-սի, | |
| | | Պօղիկարպոսի հայր. Զմիւռ- | |
| | | նիոյ և վկայիցն, որք յարենս | |
| | | կատարեցան։ | |
| 11 | 24 | Դշ. աձ. պահք։ | 1 |
| | | Ծնունդ լուսնի | |
| 12 | 25 | Եշ. ակ. Սրբ. Եւստրատիոսի, | 2 |

| Հ. | Ն. | | Լ. |
|---|---|---|---|
| | | Օգսենտիոսի, Եւգինէոսի, Ով- | |
| | | րեստէսի, և Մարդարիոսի։ | |
| 13 | 26 | Ուրբ. բձ. պահք։ Նախա. | 3 |
| 14 | 27 | Շաբ. բկ. Սրբ. Յակոբայ | 4 |
| | | Մծբնայ հայրապ. Մարուգէի | |
| | | ճգն. և Մելիտոսի եպիս. | |
| 15 | 28 | † Կիր. գձ. դ.գկնի Ցիսն. | 5 |
| 16 | 29 | Բշ. գկ. Սրբ. հայր. Իգնա- | 6 |
| | | տիոսի, Ագգէի և Մարութ. եպ. | |
| 17 | 30 | Գշ. դձ. Սրբ Թէոպոմպայ | 7 |
| | | եպ. և Թէոփնայ վկ. և չորից | |
| | | զին. Բասոսի. Եւսիբի, Եւտի- | |
| | | գի և Բասիլիդեայ։ | |
| 18 | 31 | Դշ. դկ պա.ք: | 8 |
| 19 | 1 | Եշ. աձ. Սրբ. կուս. Ինդոսի, | 9 |
| | | Դոմնայի և Գդերիկոսի քահ | |
| | | և երկուց բիւրոցն, որք այրե- | |
| | | ցան յեկեղեցին Նիկոմիդայւոյ | |
| | | ՆՈՐ ՏՕՄ ՅՈՒՆ 1920 ա | |
| 20 | 2 | Ուրբ. ակ. պահք։ | 10 |
| 21 | 3 | Շաբ. բձ. Ս. Աբգարու Նախ. | 1 |
| | | և Անդրանիկ Թագու. մերոյ։ | |
| 22 | 4 | † Կիր. բկ. ե գկնի Ցիս. Նախ. | 12 |
| 23 | 5 | Բշ. գձ. Ս. Դաւթի մարգ. և | 13 |
| | | Յակովբայ Առաքելոյն Նախ | |
| 24 | 6 | Գշ. գկ. ս. Ստեփանոսի Նա- | 14 |
| | | խավկային և առ. Մարտիր. | |
| 25 | 7 | Դշ. դձ. պահ. Նախատօն. | 5 |
| 26 | 8 | Եշ, գկ. ս. առաք. Պետր. և Պօղ. | 16 |
| | | լրումն լուսնի | |
| 27 | 9 | Ուրբ. աձ. պահ. Նախատօն. | 17 |
| 28 | 10 | Շաբ. ակ. ս. որդոց Որոտ- | 18 |
| | | մանց Յակովբայ առաքելոյն. և | |
| | | Յովհաննու Աւետարանչին։ | |
| 29 | 11 | † Կիր. բձ. Զ. գկնի յիսնակի։ | 19 |
| | | Բարեկենդ. Ծնունդ. պահոց. | |
| 30 | 12 | Բշ. բկ. ա. օր ծննդ. պահ. | 20 |
| 31 | 13 | Գշ. գձ բ. օր ծննդ. պահ. | 21 |

Դեկտ. 1-ից մինչև 31-ը օրն երկարել է ,, ժ 22 ր.



# ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

## ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ

(Հաստատուած 1918 Թ. օգոստոսի 11-ին)

1. Նախիջևանում, Ռոստովում և Ս. Խաչ աւանում ապրող հայերը իրանց անդամների կուլտուրական կեանքը կառավարելու համար կազմում են Նոր-Նախիջևանի Հայկական Համայնք։

2. Համայնքի անդամ է համարւում Նախիջևանում, Ռոստովում և Ս. Խաչ աւանում ապրող ամեն մի հայ, որ յատուկ յայտարարութեամբ չի մերժել իր հայ լինելը և կամ ցանկութիւն չի յայտնել դուրս գալ սոյն Համայնքից ։

3. Քսաննմէկ տարին լրացրած ամեն մի անդամ ձեռք է բերում ընտրելու և ընտրուելու իրաւունք։

4. Համայնքի բոլոր անդամների համար կազմւում ու պահւում են յատուկ մատեաններ։

## ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

37925 / 8008

5. Համայնքը վարում, տնօրում և գործում է ի դէմս Համայնական խորհրդի՝ բաղկացած 60 պատգամաւորներից։

6. Համայնական խորհրդի լիազօրութիւնը տեւում է երեք տարի։

7. Համայնական խորհրդի պատգամաւորների ընտրութիւնը կատարւում է գաղտնի քուէարկութեամբ, որին մասնակցում են Համայնքի 21 տարին լրացրած ու 4 յօդ. յիշատակուած յատուկ մատեաններում արձանագրուած անդամները, առանց սեռի խտրութեան։ Բացի 60 պատգամաւորներից ընտրւում են նաև 10 անձնափոխանորդներ։

8. Համայնական խորհրդի նիստերը տեղի են ունենում Նոր-Նախիջևանում։ Խորհուրդն ունի կնիք իր անուամբ։

9. Համայնական Խորհուրդն ունի իր նախագահութիւնը՝ բաղկացած նախագահից, երկու փոխ նախագահներից և երկու քարտուղարներից՝ ընտրուած մէկ տարով։

10. Նախագահութիւնը վարում է Խորհրդի նիստերը։

11. Համայնական Խորհուրդը որոշում է Համայնքի օգտին՝ Համայնքի իւրաքանչիւր անդամից հասնելի տուրք-վճարումների չափը, հրատարակելով այդ մասին առանձին պարտադիր կանոններ։

12 Համայնական Խորհուրդը խնամում և հոգում է. ա) հայերի լուսաւորութեան, բ) խնամատարութեան, գ) տնտեսական զարգացման, դ) եկեղական հայկական կուլտուրական-կրթական և բարեգործական հաստատութիւնների և ե) հայ մամուլի վերաբերեալ խնդ[illegible]



13596-58

## ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

13. Համայնքի միջոցները կազմում են. 1) Նրա բոլոր անդամների պարտադիր տուրք-վճարումները, 2) կտակուած շարժական և անշարժ կայքերն ու նուիրատուութիւնները, 3) պետութիւնից, քաղաքներից և հասարակական կազմակերպութիւններից ստացուող նպաստներ։

## ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

14. Համայնքի գործադիր մարմինն է Ազգային Համայնական Վարչութիւնը։
15. Վարչութիւնը կազմուած է երեք անդամներից, որոնց ընտրում է Համայնական Խորհուրդը Համայնքի 25 տարին լրացրած անդամներից երեք տարի ժամանակով։ Վարչութեան անդամների ծառայութեան ժամանակը, յամենայն դէպս, լրանում է Վարչութիւն ընտրող Խորհրդի լիազօրութեան ժամանակաշրջանի լրացմամբ։
16. Վարչութեան մէջ նախագահում է նրա անդամներից մէկը՝ Համայնական Խորհրդի որոշմամբ և ընտրութեամբ։
17. Ի դէմս Վարչութեան, իբրև գործադիր մարմնի, Նոր-Նախիջևանի Համայնքը, որպէս մի իրաւական անձն, իրականացնում է իւր բոլոր սեփականատիրական և քաղաքացիական իրաւունքները, ձեռք է բերում շարժական և անշարժ կայքեր, օտարացում (отчужденіе), պայմաններ է կապում, իրաւաբանական պաշտպանութեամբ օգտւում և այլն։
18. Վարչութեան պարտականութիւնն է. ա) Համայնքի անդամների ցուցակագրութիւնը բ) Խորհրդի բոլոր որոշումների գործադրութիւնը, գ) Խորհրդի իրաւասութեան ենթակայ խնդիրների մասին Խորհրդի զեկուցումներ և նախագծեր ներկայացնել, դ) վարձել ծառայողներ Խորհրդի մշակած շտատի համաձայն, ե) գանձել և պահել Համայնքին պատկանած գումարները, զ) հաւատարմաթղթեր և լիազօրութիւններ տալ Համայնքի սեփականատիրական և քաղաքացիական շահերը պաշտպանելու համար.
19. Վարչութեան կից հաստատւում են Համայնական Խորհրդից ընտրուած նախապատրաստական յանձնաժողովներ՝ համաձայն Խորհրդի իրաւասութեան ենթակայ բոլոր գործերի. յանձնաժողովները ղեկավարւում են Խորհրդի տուած առանձին հրահանգներով և նակազներով։

## ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ
## ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ.

20. Համայնական Խորհրդի նիստը օրինական է համարւում, եթէ ներկայ է պատգամաւորների կէսը։
21. Բոլոր հարցերը վճռւում են ձայների հասարակ մեծամասնութեամբ և բաց քուէարկութեամբ, բացի այն դէպքերից, երբ երեք պատգամաւոր պահանջեն գաղտնի քուէարկութիւն։ Գաղտնի քուէարկութեամբ է վճռւում նոյնպէս և Համայնքի անդամութիւնից հեռացնելու հարցը ըստ որում վճռի կանոնաւորութեան համար անհրաժեշտ է ուժեղացրած մեծամասնութիւն, այն է ժողովին ներկայ եղող պատգամաւորների երկու երրորդի համաձայնութիւնը։
22. Համայնքից հեռացնելու առիթներ են. 1) դատաստանական վճռով դատապարտումն այնպիսի քրէական յանցանքների համար, որին ուղեկցում է իրաւունքների սահմանափակում, 2) ակնյայտնի արհամարհանք դէպի Համայնքը։



23. Խորհրդի նիստերն արձանագրւում են առանձին մատեաններում, որ որ կարդացւում և ընդունւում են ու վաւերացւում նախագահի և քարտուղարներից մէկի ստորագրութեամբ։

## ՀԱՄԱՅՆՔԻ ՓԱԿՈՒՄԸ.

24. Մի որևէ պատճառով Համայնական գործերի լուծման դէպքերում նրա բոլոր միջոցները ընդհանուր ժողովի որոշմամբ յատկացւում են հայերի կուլտուրական գործերին և տրւում այն հաստատութեան, որի ձեռին են այդ գործերը։

№ 142 Սոյն մակագրութիւնը արուած է Ռոստովի Դ-վ. Շրջանային Դատարանի կողմից, ռէգիստրասիոնի բաժանմունքում այն մասին, որ Դատարանի որոշմամբ 1918 թւականի օգոստոս 11-ից Նոր-Նախիջևանի Հայ Համայնքը անցրւած է ոչ շահադիտական նպատակ ունեցող ընկերութիւնների և միութիւնների ռէէստրի առաջին մասում։

## ՊԱՐՏԱԴԻՐ ՏՈՒՐՔԵՐ.

Սոյն 1918 թւականի համար Համայնական Խորհուրդը հարկեր նշանակելիս՝ ժամանակաւորապէս առաջնորդուել է հետևեալ նորմայով։

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1,000,000 ր. և աւելի կարողութիւն ունեցողներին | | | | 1,500 ր. տուրք. | | |
| 500.000 ր. | մինչև 1.000,000 ր. | կարող. | ,, | 600 | ,, | ,, |
| 200,000 ր. | ,, 500,000 ր. | ,, | ,, | 300 | ,, | ,, |
| 50,000 ր. | ,, 200,000 ր. | ,, | ,, | 200 | ,, | ,, |
| 10,000 ր. | ,, 50,000 ր. | ,, | ,, | 100 | ,, | ,, |
| 5,000 ր. | ,, 10,000 ր. | ,, | ,, | 50 | ,, | ,, |
| 3,000 ր. | ,, 5,000 ր. | ,, | ,, | 25 | ,, | ,, |
| 3.000-ից պակաս | | ,, | ,, | 15 | ,, | ,, |

Ռոճիկ ստացողները վճարում են իրենց տարեկան ռոճիկի 1 % -ը։

Համայնքի սահմաններում բնակւող և իր եկամուտը ունեցող ամեն մի հայ ենթարկւում է համայնական տուրքի։

Համայնքի իւրաքանչիւր անդամ կարող է գրաւոր կերպով խնդիր ներկայացնել, իրեն հարկատուութեան այս կամ այն կարգին դասելու համար, որը որ իր ունեցուածքին համապատասխան կը գտնի։

Երկու շաբաթուայ ընթացքում խնդրագիր չներկայացնելու դէպքում, որոշուած տուրքը համարւում է ընդունուած։

# ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՒ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ.

## 1) ՊՐԷԶԻԴԻՈՒՄ

Նախագահ՝ Ռուբէն Բերբերեան

փոխ-նախագահներ՝ ( Համբարձում Տէրտէրեան
( բժ. Ղեւոնդ Քրիստոստուրեան

քարտուղարներ՝ ( Զաքարիա Խօշաֆեան
( Գրիգոր Լողոշնիկեան

## 2) ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Նախագահ՝ Երւանդ Ճահագիկ

անդամներ ( Աւագ Մելիք-Վարդանեան
( Գրիգոր Չուբարեան

## ԱՒԱԳՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

(Senioren Convent)

Գրիգոր Չալխուշեան
Անդրէաս Սալթիկեան
Արտաշէս Յովակիմեան
Յարութիւն Մահտեսեան
Վարդան Չուբարեան

## 4) ԱՐՏԱՔԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆ

Նախագահ՝ Ռուբէն Բերբերեան
փոխ-նախագահ Գրիգոր Չալխուշեան
քարտուղար՝ Գրիգոր Չուբարեան

Անդամներ՝ (Գէորգ Ճլթեան
(Արտաշէս Յովակիմեան

## 5) ՖԻՆԱՆՍԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ.

Նախագահ՝ Աստուածատուր Գէնչ-Օղլուեան
փոխ-նախագահ՝ Արմենակ Տէր-Պօղոսեան
քարտուղար Գասպար Սուրաշեան

Անդամներ
Գաբրիէլ Ճլաուխեան
Սերովբէ Տիրացուեան
Ստեփան Զօրհաբեան
Յովնան Յովնանեան
Դաւիթ Ձերնեան
Տիգրան Թիւթիւնջեան։



## 6) ԿՐԹԱԿԱՆ-ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ.

Նախագահ՝ Գրիգոր Չալխուշեան
փոխ-նախագահ՝ Սահակ Մեսնիկեան
քարտուղար՝ ՎարդանԶուբարեան

Անդամներ
Զաքարեա Խօշաֆեան
Յարութիւն Մահտեսեան
Յովհաննէս Տէրտէրեան
Տէր Պօղոս ա. ք. Բեդելեան
օր. Իսկուհի Խազիզեան
Յովակիմ Խամբուրեան
օր. Մարիամ Ալեանակի։

## 7) ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Նախագահ՝ Լեւոն Ոսկանեան
քարտուղար Սերովբէ Զաթալբաշեան
Աւագ Մելիք-Վարդանեան
Ալէքսան Զօրհաբեան
Մկրտիչ Բուդաղեան

## 8) ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Արշալոյս Մհերեան
Գրիգոր Բեդելեան
Յարութիւն Ալեանակի
Մկրտիչ Բուդաղեան

## 9) ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վարչութիւնը ամբողջովին և պրէզիդիումի նախագահը։

խմբագիրներ
Եր. Ճահագիկ
Ռ. Բերբերեան։

## ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍՍԱՐԱԲԻՈՅ ԹԵՄ.

Թեմ. Առաջնորդ (Թափուր)

Վիճ. կոնսիստորիա (Մուշէ վարդապետ Նախանդամ.
(Գրիգորիս վարդ. անդամ

## ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Անդամներ Մկրտիչ ա. ք. Տէր-Յակոբեան
Պօղոս ա. ք. Բեգելեան.

## ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՒ ՔԱՀԱՆԱՆԵՐԸ.

Նոր-Նախիջևանի Հոգևոր Կառավ. շրջան։

| Քաղաք | Եկեղեցիք | Քահանաներ |
|---|---|---|
| Ն-Նախիջևան | Ս. Լուսաւ. մայր եկեղ. | դաս. Սարգիս ք. Ոսկերչեան.<br>Գէորգ ա. ք. Քելլէ-Շահինեան.<br>Ռուբէն ա ք. Բէկգիւլեան. |
| ,, ,, | Ս. Նիկողայոս | Մարտիրոս ա. ք. Գանձապետեան. դաս.<br>Պօղոս ա ք. Բեգելեան. |
| ,, ,, | Ս.Աստուածածնայ | Մինաս ք. Խումաչեան. դաս.<br>Կարապետ ք. Մոչեան. |
| ,, ,, | Ս. Գէորգ | Մկրտիչ ա. ք. Տէր-Յակոբեան դաս.<br>Կարապետ ք. Հեքիմեան. |
| ,, ,, | Ս. Թէոդորոս | Ներսէս ք. Թորոսեան. (ժամ.) |
| ,, ,, | Ս. Համբարձման | Պետրոս ք. Զալախեան. (դաս.)<br>Խաչատուր ք. Բուդաղեան. |
| ,, ,, | Ս. Կարապետ | Նիկողայոս ք. Քրիստոստուրեան. |
| Չալթըր | Ս. Համբարձման | Յովհաննէս ք. Քրիստոստուրեան.<br>Խաչատուր ք. Տ. Բաղդասարեան.<br>Գրիգոր ք. Բարդախչեան.<br>Արգար ք. Բարաչեան. |
| Թոփտի | Ս. Փրկչի | Պօղոս ք. Տէր-Աբրահամեան.<br>Դանիէլ ք. Նահապետեան. |
| ,, ,, | Ս. Սարգիս | Էմանուէլ ք. Հաճիեան. |
| Մեծ-Սալա | Վերափոխման | Արսէն ք. Դոմբայեան.<br>Գրիգոր ք. Նոր-Արևեան.<br>Սահակ ք. Ջօրլուեան. |



| Քաղաք | Եկեղեցիք | Քահանաներ |
|---|---|---|
| Փոքր-Սալա | Ս. Գէորգ | Գէորգ ք. Թոփալեան |
| Նիսվիլթա | Ս· Կարապետ | Սարգիս ք. Մարտիրոսեան |
| | | Գրիգոր ք. Յակոբեան |
| Կատերինասլաւ | Ս Յարութեան | Թափուր |
| Տագանրոգ | Ս. Յակոբ | Յովհաննէս ք. Օգսենտեան |
| Վորոնէժ | Ս. Լուսաւորիչ աղօթ. | Մկրտիչ ք. Տ. Թադէոսեան |
| Լուգանսկ | Աղօթարան | Ներսէս ք. Վարդանեան |
| Եւզովկա | Աղօթարան | Կարապետ ք. Դաւթեան |
| Պետրոգրադ | Ս. Կատարինէ | Գրիգոր ա. ք. Տ. Գրիգորեան |
| | Գերեզմանատուն | Նիկողայոս ք. Քիւրդեան |
| Մոսկվա | Ս. Խաչ | Սեդրակ ք Աղաբալեան |
| | Ս. Աստուածածնին | Արսէն ք. Սիմէոնեան |
| | Գերեզմանատան | ,, ,, |
| Կիեւ | Աղօթատուն | Խորէն ա. ք. Մնացականեան |
| Քիշինև | Եկեղեցի | Թափուր |
| Օդեսսա | Ս. Կատարինէ | Յովհաննէս ա. ք. Զուբարեան |
| Գրիգորիոպոլ | Եկեղեցի | Յարութիւն ք. Տ. Սնօքեան |
| Օրհէյ | ,, ,, | Մարտիրոս ք. Ջատիկեան |
| Հնչեշտ | ,, ,, | Յովհաննէս ք. Աբրահամեան |
| Խարկով | Աղօթատուն | Սրապիոն ք Սամուէլեան |
| Աքկերման | Եկեղեցի | Երեմիա ք. Ապրելեան |
| Իզմայիլ | ,, ,, | Թափուր |
| ՂՐԻՄԻ ՇՐՋԱՆ. | | |
| Մելիտոպոլ | ,, ,, | Վահան ա. ք. Մամիկոնեան |
| Նողայսկ | ,, ,, | |
| Արմեանսկ | ,, ,, | Օգսենտիոս ք. Հայրունի |
| Սիմֆերոպոլ | Ս. Աստուածածնի | Երուանդ ա. ք. Նալբանդեան |
| Ղարասուբազար | ,, ,, | Աստուածատուր ք. Մեդնիկեան |
| Թէոդոսիա | Ս. Սարգիս | Արշաւիր ք. Վարդանեան |
| | Գէորգ | |
| | Յովակիմ և Աննա | |
| | ,, ,, | |
| Եւպատորիա | Ս.Նիկողայոս | Կարապետ ք. Թումանեան |
| Բաղչիսարայ | Յովակիմ և Աննա | |
| Եալթա | Աղօթատուն | Յակոբ ք. Բեօրեքչեան |
| Կերչ | ,, ,, | Ղեւոնդ ք. Այգինեան |
| Հին-Ղրիմ | ,, ,, | Դաւիթ ք. Քեչիչեան |
| Սեւաստոպոլ | ,, ,, | Թափուր |
| | Վանքեր | |
| Ն-Նախիջևան | Ս. Խաչ | Մուշէ վարդապետ |
| Հին-Ղրիմ | Ս. Խաչ | Թափուր |
| Ղարասուբազար | Ս. Փրկիչ | Աստ. ք. Մեգնիկեան |

Ն-Նախիջեւանի շրջանի հայոց ուսուցչական միութիւն.
(ունի 120 անդամ)

նախ. Տէր-Յարութիւնեան Աւետիս
փոխ-նախ. Թարախեան Գէորգ
գանձապահ Զուբարեան Միքայէլ
քարտ. Խայլխեան Յակոբ
վարչութ. Թիքիճեան Մարտիրոս
անդամներ Խաւրանեան Եղիազար

Ղրիմի հայ ուսուցչական միութիւն:
(ունի 20 անդամ)

վարչութ. նախ. տ. Եղիսաբէթ Գրիգեան
քարտուղար Արշէն Արծրունի
անդամ Սմբատ Տէր-Ստեփանեան:

Ն-Նախիջեւանի հայոց Թեմական Դպրանոց:

Հոգաբարձութիւն:

Պօղոս ա. ք. Բեգլեան
Կար. Սրմաքեշեան
Ոնուփրիոս Անպետքեան
Ներսէս Ստեփանոսեան
Դաւիթ Չերնեան
Գաբրիէլ Ճլաուխեան
Առաքել Առաքելեան (անձամբ.
Խաչատուր Խալփախչեան փոխան.

Մարտիրոս Թիքիճեան
Աւետիս Տէր-Յարութիւնեան
Սերովբէ Զաթալբաշեան
Գէորգ Գէորգեան
Յովհաննէս Տէրտէրեան
Ստեփան Նաւարեան
Յովհաննէս Ղարիբեան
Աստուածատուր Լիլիճեան
Գրիգոր Լողոշնիկեան

Ուսուցչական խումբը:

Գէորգ ա. ք. Քելլէ-Շահինեան
Աբրահամ Ջամինեան
Յարութիւն Բայբուրդեան
Իշխան Զօրհարեան
Յակոբ Խաչատրեան

Վերակացուներ:

Համայեակ Ահարոնեան
Օհան Զօրհարեան
Բաղդասար Մելիքեան:

Ն-Նախիջեւանի հայոց 7 դաս. Գողոյեան օրիորդաց գիմնազիա:

Հոգաբարձութիւն ըստ կանոնադրութեան Ռոստովի քաղաքապետ, Նախիջեւանի քաղաքագլուխ, քաղ. ընտրած 2 ձայնաւոր. տեսուչ և տեսչուհի:

օր. Խադիգեան Իսկուհի
Բայբուրդեան Յարութիւն
Ջամինեան Աբրահամ
Զօրհարեան Իշխան
Սողոմոնեան Դաւիթ
Աւետիկեան Վիկտոր

Ուսուցչական կազմը:

Խամբուրեան Յովակիմ տեսուչ
օր. Ալեանակի Մարիամ տեսչուհի
Քելլէ-Շահինեան Գէորգ ա. ք.
Բուրովա Նինա
տ. Ալեանակի Մարիամ
տ. Զարիֆեան Սանդուխտ
տ. Մելիքեան Մարիամ
տ. Շահ-Ազիզ Հեղինէ

Վերակացուհիք:

օր. Զորչոփեան Աննա
,, Զայլախեան Շուշանիկ
,, Գուրջեան Մարիամ
,, Ուզունեան

Ն-Նախիջեւանի Հռիփսիմեան օրիորդաց երկդաս. դպրոց:

Հոգաբարձութիւն
Շահ-Ազիզ Երուանդ նախագ.
Սալթիկեան Անդրէաս
Պոպով Միքայէլ

Սուրաշեան Գասպար
Բեգլեան Գրիգոր
Տէր-Յարութիւնեան Աւ. (անձնա.
Տէր-Սարգսեան Օգո. (փոխան.



Ուսուցչական կազմը:

տ. Ջամինեան Թագուհի տեսչ.
Քրիստոստուրեան Նիկողայոս ք.
տ. Քրիստոստուրեան Վարդուհի
տ. Զաթալբաշեան Հռիփսիմէ
օր. Կարամուրզա Մարիամ

օր. Զուբարեան Թագուհի
Խայլխեան Յակոբ
Խումաշեան Մինաս
տ. Խումաշեան Եղիսաբէթ

Վերակացուհիք:

տ. Զուբարեան Լուսիկ
օր. Խաճեան Շուշանիկ:

Սանդխտեան օր. միդաս. դպրոց:

Հոգաբարձութիւն

Բեգլեան Պօղոս ա. ք.
Շարշնիկեան Յովհաննէս
Խալփախչեան Խաչատուր:

Ուսուցչական կազմ:

Զուբարեան Վարդան աւ. ուս.
Մոշեան տ. Կարապետ
Բեգլեան Յակոբ
օր. Մութաֆեան Իսկուհի
,, Սրմաքէշեան Մարիամ
,, Ամիրայեան Մարիամ
Սողոմոնեան Դաւիթ:

Սր. Աստուածածին եկեղ. կից. Արհեստաւորաց դպրոց:

Հոգաբարձութիւն:

Խլէբնիկեան Յովհաննէս նախ. ագ.
Զայլախեան Յովհաննէս
Մելքոնեան-Եղեկեան Միք.
Շլթեան Գէորգ
Մահտեսեան Յարութ:

Ուսուցչական կազմ

Խօջաֆեան Զաքարեա-տեսուչ
Մոշեան Տ-Կարապետ

Սուլթան-Շահ Մելքոն
Դարախեան Գէորգ
Զաթալբաշեան Սէրովբէ
Ղարիբեան Յովհաննէս
Գաւնակերեան Գէորգ:

Վարպետներ:

Վոլնդեոլիւին Աղէք.
Տէր-Վարդանեան Աղէք.
Այւեան Մելքիսեդ.

Սր. Թէոդորոսի աղայ՚ց միդաս. դպրոց:

Հոգաբարձութիւն
Խանումեան Գէորգ-նախ.
Զաթալբաշեան Սէրովբէ
Սագիրեան Գալուստ
Սագիրեան Քրիստափոր:

Ուսուցչական կազմ:
Մահտեսեան Յարութիւն-աւ. ուս.
Շիրինեան Գէորգ
Լիլեճեան Աստուած.
Ադաջանեան Ստեփան
տ. Խանումեան Աննա
օր. Տէր-Մանուէլեան Գայանէ
,, Քեչեկեան Հռիփսիմէ:

Սր. Համբարձման միդաս. տղ. դպրոց:

Հոգաբարձութիւն:

Զօրհարեան Ստեփան-նախ.
Կոստանդեան Սարգիս
Տիրացուեան ,,
Սախաճեան Գալուստ
Աւետեան Եղիա:

Ուսուցչական կազմ:

Զուբարեան Միքայէլ աւ. ուս.
Տիրացուեան Սէրովբէ
Ադաջանեան Ստեփան
Սողոմոնեան Դաւիթ
Թոռչեան Խաչատուր:

Ռոստովի Պարսկահայերի Առետրական դպրոց

Դպրոցի խնամակալ՝ Պարսկահայ Միութիւն Յովնան Պետրոսեան Յովնանեան:

Ուսուցչական կազմ:
Բարխուդարեան-տեսուչ
Հեքիմեան Կարապետ քահ.

օր. Գրիգորեան
օր. Սամբուլեան:

## Ն-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ և ՌՈՍՏՈՎԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ.

1) Ն-Նախիջեանի հայոց եկեղեցական ազգատաց հոգաբարձութիւն

Սալթիկեան Անդրէաս նախագահ.
Բէկգիւլեանց Ռուբէն ա. ք. որբանոցի խնամակալ
Հեքիմեան Կարապետ քահ. անկել. խնամ.
Ալլահվերդեան Մանուկ գանձապահ.
Խոճայեան Կարապետ որբան. խնամ.
Քերեստեճեան Սարգիս որբան. խնամ.
Չաթալբաշեան Սեւովբէ անկել. խնամ.
Խանումեան Գէորգ աղքատ. խնամ.
Թոփալեան Իսահակ ճերմ. արհ. և անշ. կալծք.
Ճապոշնիկեան Յովհաննէս
Չալախեան Յովհաննէս.
Պոպովեան Գաբրիէլ.
Կաստանդեան Սարգիս.
Դերեջանեան Արգար իրաւաբ. գործ. խորհրդ.
Բոդղանեան Յակոբ քարտուղ. և գործավար.
Տ-Սարգսեան Օգսենտ հաշւապահ

2) ՌՈՍՏՈՎԻ ԵՒ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

| | |
|---|---|
| Ոսկանեան Ս, նախագահ. | Թոփալեան Ի. |
| Չաթալբաշեան Ս. փոխ-նախ. | Բուղաղեան Յ. |

Ծալփախչեան Խ.

3) ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

նախագահ Չալխուշեան Գրիգոր.

4) ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԱՆԿԱՆՑ ՀՈԳԱՏ. ԸՆԿ.

նախագահ օր. Սանդուխտ Զորչոփեան.

5) ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԸՆԿ.

նախագահ տ. Բրաքիոն Սագիրեան.

6) ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ ՊԱՀՈՂ ԸՆԿ

նախագահ տ. Եղիսաբէթ Խոճայեան.
փոխ-նախագահ. տ. Վառվառէ Կաստանդեան.

7) Ռոստովի Հայոց Իգմիրլեան Բարեգ. Ընկ.
նախագահ. Սրապիոն Ճեվելեկեան.

8) Ռոստովի Հայուհեաց Բարեգ. Ընկեր.
նախագահ. տ. Ե. Անպետքեան.

Հայ Թատերասիրաց Ընկ.
Նախագահ Տիրացուեան Սարգիս։





### Ս. ԷՋՄԻԱԾԻՆ.

Մ. Աթոռի Սբ. Էջմիածնայ վանքը հիմնւել է 303 թւին։ Այստեղ է ապրում Ամենայն Հայոց Կաթողիկոսը։ Ներկայումս միաբանութիւնը բաղկացած է 4 արքեպիսկոպոսներից, 13 եպիսկոպոսներից, 24 վարդապետներից և 3 աբեղաներից։ Էջմիածնում գտնւում է Գէորգեան Հոգևոր Ճեմարանը, որն հիմնւած է 1874 թւին Գէորգ Դ. կաթողիկոսի օրով։ Ներկայումս Էջմիածնի վանքը լիքն է գաղթականներով։ Եղբայրական օգնութեան կոմիտէն և Ամերիկական կարմիր խաչի ընկերութիւնը հնարաւոր չափով թեթևացնում են նրանց վիճակը, որքան այդ թոյլ են տալիս պատերազմական դրութեան պայմանները։



## ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՍԲ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ.

Հայոց մայ եկեղեցին, որ կառուցուած է Սբ. Գրիգոր Լուսաւորչի անունով գտնւում է քաղաքի կենտրոնում այն հրապարակի վրայ, որը մինչև վերջին օրերը կոչւում էր ,,Ժամի ազպար'': Այս և առհասարակ Ն-Նախիջևանի հայոց բոլոր եկեղեցիների (բացի Սբ. Կարապետից) հիմքը դրել է երջանկայիշատակ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը: Սկզբում կառուցուած էր մի փայտաշէն եկեղեցի, որի տեղը այժմ էլ կայ Լուսաւորչին պատկանող այգում և յետոյ միմիայն 1783 թ. Սեպտ. 9-ին հիմնարկուել է այժմեան քարաշէն եկեղեցին: Շինութիւնը շարունակուել է բաւական երկար և աւարտուել ու օծուել 1807 թ: Եկեղեցու ճարտարապետական ոճը ռուս-բիւզանդական է, սակայն խառն և անորոշ: Տաճարի թանգարանում պահւում են հին արժէքաւոր եկեղեցական իրեր և հաղւագիւտ ձեռագրեր:





## ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻ ԵԿԵՂԵՑԻ

Այսպէս է կոչւում Սբ. Յովհաննու-Կարապետի եկեղեցին, որը կառուցուած է Սբ. Լուսաւորչի գերեզմանատանը: Այս փոքրիկ եկեղեցին հիմնուած է 1875 թ. և օծուած 1881 թ. Յունիսի 11-ին: Եկեղեցու և նրա կից անկելանոցի շինութեան ծախքը իր կտակով հոգացել է հանգուցեալ Ակիլինէ Գօզոսեան Սլաճալեանը: Սբ. Կարապետը կառուցուած է հայկական ոճով և այդ հանգամանքը նրան մնացեալ եկեղեցիների շարքում նկատելի է դարձնում: Շնորհիւ Սբ. Կարապետի երկարամեայ երեցփոխ Կարապետ Խոճայեանի խնամքին, գերեզմանատունը դարձել է օրինակելի: Կանոնաւոր ասֆալտէ ուղիներ, ամբողջ գերեզմանոցը ծառաստան և ծաղկանոց, գեղեցիկ դամբարաններ, կանոնաւոր կարգապահութիւն: Գ. Խոճայեանի երեցփոխութեան օրով այս տխուր և ամայի վայրը դարձել է այգեստան և ծաղկանոց, ուստի և հասկանալի է, որ Ռոստովի ու Նախիջևանի բնակչութեան զբոսանքի ամենասիրելի անկիւննէ: Հարաւային Ռուսաստանում այս կանաչազարդ և կանոնաւորուած հանգստարանը իր նմանը չունի:



## ՍՈՒՐԲ ԽԱՉ ՎԱՆՔ.

Սբ. Խաչը գտնւում է Նախիջևանից 7 վերստ հեռաւորութեան վրայ։ Վանքի տաճարի հիմնարկութիւնը կատարել է Նոյնպէս. Յովսէփ Արքեպիսկոպոսի ձեռքով 1783 թ. իսկ օծումը 1792 թ. Նոյեմբ. 27-ին։ Հիմնական վերանորոգում եղել 1862 թ. Ոճը խառն ռուս-բիւզանդական է։ Վանքի բակում թաղուած են՝ Յարութիւն վարդ. Ալամդարեանը 1834 թ. մայիսի 25-ին, Միքայէլ Նալբանդեանը 1866 թ. մարտի 31-ին, Ռափայէլ Պատկանեանը 1892 թ. օգոստոսի 22-ին և Կիւրեղ եպիսկոպոս Սրապեանը 1895 թ։





## ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴ. ԱԼԱՄԴԱՐԵԱՆԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ։

Ս. Խաչ վանքի բակում թաղուած Յ. Վ. Ալամդարեանը սպանուած է 1834 թ. աւազակների ձեռքով։ Իր ժամանակին հայ հոգևորականութեան շարքում նա գիտնական մարդու հռչակ է վայելել։ Սկզբում Աստրախանի քահանայ, յետոյ Լազարեան Ճեմարանի հայկաբանութեան ուսուցիչ և Ս. Խաչ եկեղեցու աւագ երեց, նա այրիանալուց յետոյ ձեռնադրւեց վարդապետ և 1825 թ. Նորաբաց Ներսիսեան դպրանոցի տեսուչ նշանակւեց Ներսէս Ե. կաթողիկոսի հրամանով։

Ալամդարեանի 6 ամեայ տեսչութեան ժամանակամիջոցը դպրանոցի պատմութեան մէջ համարւում է օրինակելի։ Նրա տեսչութեան տարիների ընթացաւարտները ապագայում հայկական հասարակական ասպարիզում դարձան աչքի ընկնող գործիչներ։ Նրա ամենայայտնի աշակերտն է պրոֆ. Ստեփանոս Նազարեանը։ Ալամդարեանից յետոյ մնացել էր բանաստեղծութիւնների մի հատոր, առաջին ռուս-հայերէն տպագրուած բառարան և ձեռագիր հայ-հայերէն բառարան, որ այժմ Լէօի մօտ է։



ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՈՒՆ.

Աշխատանքի տունը կառուցած է Ն-Նախիջևանցի Քերովբէ Միքայէլեան Պօղօվեանի միջոցներով և բացւած ու օրհնւած է 1916 թ. յունւարի 21-ին: Նախկին քաղա-



ԱՐԴԻՒՆԱԲԵՐ ՏՈՒՆ.

քաղլուխ, Բ. Մ. Պօղօվեանը, պատկանում է Պօղօվեան այն ընտանիքին,



որի անդամները յայտնի են Նախիջևանում իրենց լայն բարեգործութեամբ: Նրանք անում են ամեն ինչ իրենց կենդանութեան ժամանակ և անձամբ տեսնում են իրենց արածի հետևանքը: Այսօր այս փառաւոր շինութեան մէջ տեղաւորուած են՝ Եկեղեցական Հոգաբարձութեան գրասենեակը, Հայ Համայնքի Ազգ. Վարչութիւնը, Հայկական Կօմիտէն, Մանկական Պարտէզ, Եկեղեց. Հոգաբ. կէր ու ձևի արհեստանոցը և բացի այդ. Նոյն շինութեան մեծ դահլիճում շատ անգամ կայանում են զանազան ժողովներ, զեկուցումներ և դասախօսութիւններ:

Քերովբէ Պօղօվեանի կրտսեր եղբայրը Մանուկ Պօղօվեանը կառուցել է իր հաշւով մի արդիւնաբեր տուն, որի զուտ եկամուտը ստանում է Հոփսիմեան դպրոցը: Այս դպրոցի պահպանութիւնը ընդհանուր թանկութեան պատճառով անցեալ դպրոցական տարւայ ընթացքում բաւականի թանկ նստաւ ուստի առաջ եկաւ խոշոր բաց: Այդ բացը դարձեալ իրենց գումարներից ծածկեցին Պօղօվեան երեք եղբայրները: Անցեալ տարւայ ամառը Սր. Լուսաւորիչ եկեղեցու երեցփոխանի պաշտօնի համար ընտրեց Պօղօվեաններէ աւագ եղբայրը Գաբրիէլ աղա Պօղօվեանը, որը խոստացել է իր հաշւով կառուցանել մի նոր շէնք Հոփսիմեան դպրոցի համար Լուսաւորչին պատկանող հողաբաժնի վրայ և բացի այդ սկսել է իր խնամքին յանձնուած մայր եկեղեցու հիմնական վերանորոգութիւնը. որի համար պիտի ծախսւի մօտ 80 հազ. ռուբլի: Այս գումարից մեծ մասը նւիրում է ինքը Գաբրիէլ աղան, իսկ մնացեալը բարեպաշտ ծխականները: Պօղօվեան ընտանիքը մեծ յարգանք է վայելում Ռոստովի և Նախիջևանի հայ հասարակութեան մէջ:



ԳՈԳՈՅԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԳԻՄՆԱԶԻԱ.

Գոգոյեան Գիմնազիայի գեղեցիկ շինութիւնը կառուցած է հանգուցեալ բարեբար Մկրտիչ Գոգոյեանի հաշւով: Այս գիմնազիան բացւած է 1882 թւին

հայ չքաւոր օրիորդների համար։ Սկզբնական տարիներում նա ունէր միայն չորս դասարան և միմիայն վերջին տարիները դարձաւ եօթը դասեան և ստացաւ պետական գիմնազիաների լիակատար իրաւունքներ աշակերտուհիների համար։ Դասաւանդութիւնը հայերէն է։ Սա միակ հայկական իգական գիմնազիան է, որը բարձրագոյն դպրոցները մտնելու իրաւունք է տալիս։

---

## I.

## ՂՐԻՄԻ ՀԱՅԵՐԸ 1918 ԹՒԻՆ.

Ղրիմ թերակղզու հայերի թւի մասին ճշգրիտ վիճակագրական տեղեկութիւններ չկան։ մօտաւորապէս նրանց թիւը հաշւում են 15 հազար, սակայն այդ թիւը մենք գտնում ենք չափազանցրած։ Ղրիմի հայերի կէսից աւելի կազմում են տաճկահայերը, որոնք գլխաւորապէս 1895-6 թւի հայկական սարսափներից յետոյ գաղթելով նաև Ղրիմ, բնակութիւն հաստատեցին համարեա բոլոր հայաբնակ քաղաքներում և մի քանի գիւղերում։

Բնիկ Ղրիմցի հայը նւաղում է, այն էլ զգալի կերպով. Եկեղեցիներում գտնւած չափաբերական մատեանները այդ ապացուցանում են պերճախօս փաստերով։ Բուն հայրենիքից և Կովկասից հեռու և մեկուսացած ապրելով, զուրկ ազգային ոգուց և կուլտուրայից, Ղրիմի հայութիւնը արագութեամբ այլասեռւում է։ Դրան մեծապէս նպաստում են ռուսական դպրոցները, որտեղ ուսանում է մանուկ սերունդը և ռուսական լեզուն, որ այդ սերնդի միակ գործածական լեզուն է։

Ճիշտ է Ղրիմի համարեա բոլոր հայաբնակ քաղաքներում կան հայկական տարրական դպրոցներ, սակայն դրանք այնպիսի խղճուկ հիմնարկութիւններ են, որ իրական կեանքում սաների համար շատ աննշան դեր են կատարում, ազգային ոգի ներշնչելու գործում։

1917 թւի ռուսական յեղափոխութիւնից յետոյ, երբ ազգայնացման գաղափարը ուժգին զարկ ստացաւ Ռուսաստանում, կարծես Ղրիմի հայն էլ մի փոքր սթափւեց. Նա հասկացաւ, որ ինքն էլ որևէ ազգի պիտի պատկանի և փորձեր արաւ զարգացնելու իր ազգային կուլտուրական արժէքները։

Առանձնապէս այդ երևոյթը նկատելի էր Ղրիմի կենտրոնական քաղաքում՝ Սիմֆերոպոլում։ Տասնեակ տարիների ընթացքում այստեղ մեկուսացած ապրող հայ և հայ-կաթոլիկ համայնքները իրար մօտեցան, հիմնեց ընդհանուր համայնական տուն՝ դասախօսութիւնների, ընթերցարանի. երեկոյթների և այլ կուլտուրական ձեռնարկութիւնների համար։

Միացրին երկու դաւանութեան դպրոցները, կազմեցին Ղրիմի ամբողջ հայութեան համար մի կենդրոնական մարմին, որ ղեկավարելու էր երկու դաւանութեան հայերի կուլտուրական և ազգային գործերը։ Ճիշտ է այդ առաջին փորձերը շատ աննշան արդիւնք ունեցին։ Դեռ պահանջւում է երկարամեայ յամառ և տոկուն աշխատանք Ղրիմի հայութեան ինքնազարգացման գործը բեղմնաւոր դարձնելու համար։ Ազգային ոգով կրթւած անձանց չնչին թիւ կազմելը և օտար կուլտուրայի ուժեղ լինելն է պատճառը, որ ապարդիւն են դարձնում այն բոլոր ջանքերը, որ գործ են դրւում ազգային կուլտուրան հայկական շրջանում պատուաստելու։ Ներկայումս Ղրիմում հերթական հարց է դարձել հայկական միջնակարգ դպրոցի բացման խնդիրը։

Այդ դպրոցն անկասկած ահագին դեր ունի կատարելու այս ազգայնապէս սպառւող ժողովրդին կորստից փրկելու համար։



## II.

Վերջին հայկական շարժումը Կովկասում և Տաճկա-Հայաստանում իր որոշ արձագանքը գտաւ նաև Ղրիմում, որտեղ այդ շարժումը ղեկավարեցին հայ ուսուցչութիւնը և տաճկահայերն։ 1918 թւի յունւարին Սիմֆերոպոլում կայացած հայկական համագումարը ընտրեց մի կենտրոնական մարմին „Տաւրիկեան Հայոց Նահանգական Կոմիտէ" անունով, որ ղեկավարելու էր Ղրիմում հայկական զօրակոչը, դրամի հանգանակութիւնը և ազգային-կուլտուրական գործերը։ Անմիջապէս միւս քաղաքներում էլ կազմւեցին տեղական կոմիտէներ նոյն նպատակով։

Սակայն ազգային այդ անօրինակ տագնապի օրերին իսկ ազգային ոգուց զուրկ Ղրիմի հայը չոգևորւեց։ Այդ գործում կրկին առաջ մղւեց տաճկահայութիւնը, որ կամաւորական խմբեր կազմելով հարիւրներով մեկնեց Կովկաս, իր կեանքի գնով պաշտպանելու այն։ Դրամական հանգանակութիւնն անցաւ շատ անյաջող։ Պատերազմի ընթացքում աւելի էլ հարստացած հայ հարուստը մեծ մասամբ հրաժարւում էր դրամ տալուց, նոյն իսկ իր հայրենիքի պաշտպանութեան և փրկութեան համար։ Նա առաջարկում էր սովորական կոպէկները, որ վարժւել էր շպրտել իբրև ողորմութիւն։ Սրբազան պարտքի գիտակցութիւնը իսպառ բացակայում էր։ Ղրիմի հայութիւնը իր տասնեակ միլիոնների կարողութեամբ հայրենիքի փրկութեան համար դրամով փոխադրեց ընդամենը 20 հազար րուբլի։

Բաթումի անկումից յետոյ, Բաթումի և մասամբ Արդւինի շրջանի հայութիւնը գաղթեց Ղրիմի Կերչ, Թէոդոսիա և փոքր մասն էլ Սիմֆերոպոլ քաղաքները։ Սիմֆերոպոլում մի քանի հայ տիկնանց նախաձեռնութեամբ հիմնւեց „Մի բաժակ թէյ" պատերազմի հայ զոհերին օգնելու համար։

Ղրիմում թաթարական ազդեցութիւնը ուժեղանալուց յետոյ ուժեղացաւ նաև Ղրիմցի հայերի ազդեցութիւնը։ Իսկոյն երևան եկան հայ յետադէմ տարրերը, որոնք յենւած թաթարական իշխանութեան աջակցութեան վրայ իրանց ձեռքն առին բոլոր հասարակական գործերը։ Այդ երևոյթից անմիջապէս տուժեցին հայ ուսուցիչները, որոնցից մի քանիսը իսկոյն պաշտօնից արձակւեցին իրանց նախկին գործունէութեան համար։

Չենք կասկածում որ Ռուսաստանի քաղաքական մթնոլորտը պարզւելուց յետոյ, կպարզւի նաև ամենուրեք հայկական ազգային և հասարակական կեանքի մթնոլորտը։ Ամեն տեղ ժողովրդական մասսան իր գործերի ղեկը կյանձնի իր իսկական բարեկամներին։ Գաղափարական գործիչները նորից ասպարէզ կգան, որոնք և ընդունակ կլինեն միայն զոհողութեամբ գործելու։

Ն. Ք. Աբրահամեան։

---

# ՄՇՈՅ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ։

Արաբները այս վանքը անւանում էին ,,Զանգլի-Քիլիսա‘‘։ Հայերիս մէջ նա յայտնի է Ս. Կարապետի վանք անունով։ Հասարակ ժողովուրդը նրան անւանում է ,,Մշոյ Սուլթան Ս. Կարապետ‘‘ տարբերելով այն այլ տեղերում գտնւած համանուն վանքերից։

Ս. Կարապետի վանքը գտնւում է Մշոյ Դաշտից հիւսիս-արեւմուտք։ Էջմիածնի վանքից յետոյ սա հայ ժողովրդի կողմից ամենից պաշտւած վանքն է։ Ուխտագնացութիւնը դէպի Ս. Կարապետ դեռ հին ժամանակներից համարւում էր մի տեսակ հերոսութիւն, իսկ Հայաստանը Թուրքերից գրաւելուց յետոյ



ուխտաւորութիւնը դէպի Ս. Կարապետ աւելի դժւարացաւ. որովհետեւ այն հանդիպում էր մեծ արգելքների թէ իր հեռաւորութեան, թէ ձիով գնալու դժւարութեան եւ թէ քրդական հրոսակների աւազակութիւնների պատճառով։ Այնուամենայնիւ ուխտաւորների թիւն այս վանքում միշտ մեծ է եղել։ Այստեղ հայերն ուխտի էին գալիս երկրագնդի բոլոր մասերից։ Մանաւանդ սիրում էին այս վանքը Ղրիմի եւ Ն-Նախիջեւանի հայերը։ Դրան ապացոյց այն անթիւ անհամար արձանագրութիւններն են, որ արել են ուխտաւորները վանքի տաճարի արտաքին եւ ներքին պատերի վրայ։ Ես տեսել եմ արձանագրութիւններ նոյն իսկ 1801 թւից։

Վանքի դիրքը շատ գեղեցիկ է։ Առաջից երեւում են Սասնոյ լեռները Անդոք ձիւնապատ գագաթով։ Այստեղից երեւում է ամբողջ Մշոյ դաշտը, իր բազմաթիւ գիւղերով եւ Եփրատի Արածանի վտակը Մուրադի կամրջով, որ ըստ աւանդութեան կառուցել է Լենկթէմուրը Աշտիշատի աւերակներից, ուր գտնւում էր Լուսաւորչի տոհմի կաթողիկոսների ապարանքը։

Վանքի դիրքը հմայիչ է։ Շուրջը անտառներ՝ բազմաթիւ աղբիւրներով։ Ունի հրաշալի օդ՝ շնորհիւ բարձր դիրքի, որ ծովի մակերեւոյթից 8987 ոտնաչափ է։



Ս. Կարապետի վանքը կոչւում է նաեւ Գլակայ վանք։ ,,Գլակ‘‘ բարդ բառ է. Գ-լ-ա-կ. գ-3 լ-30 ,,ակ‘‘ աղբիւր, այսինքն 3 անգամ 30 ակն։ Աւանդութիւնն ասում է թէ վանքում կար 90 աղբիւր, թէեւ այժմ նրանց թիւը 60-ից աւել չէ։ Նրանցից գլխաւորը ,,Մայրակն‘‘ է։

Այս վանքը կոչւում է նաեւ ,,Իննակնեան‘‘։ ,,Զանգլի‘‘ արաբները կոչեցին նրա համար, որ առաջին անգամ այս վանքում թոյլատրեցին ,,Զանգ‘‘, այսինքն, զանգ կախել։

Ես երկու անգամ այցելեցի Ս. Կարապետ, առաջին անգամ 1914 թւի ամառը մինչեւ պատերազմը, երբ վանքը գտնւում էր ծաղկած դրութեան մէջ. կար միաբանութիւն, վանահայր Վարդան վարդապետի գլխաւորութեամբ, երկդասեան դպրոց 70 սաներով, բազմաթիւ ծառաներ. մեծ հարստութիւն բաղկացած ոչխարների հօտերից, տաւարի նախիրներից, կաթնատնտեսութիւն, իսկ վանքին պատկանող ահագին հողերում ցանում էին ամեն տեսակ հացահատիկներ։ Մի խօսքով վանական կեանքը եռում էր։ Կային մօտ 5000 ուխտաւորներ, որոնք տեղաւորւած էին վանքի գաւթում եւ անտառում եւ որոնք կերակրւում էին վանքի հաշւով։ Ժամերգութիւնը կատարւում էր անընդհատ։

Այն ժամանակ ես այցելել էի վանքը եւ որպէս ուխտաւոր եւ իբրեւ ներկայացուցիչ Յ. Մ. Պողոսի, նրա հօր անունով կառուցելիք գիւղատնտեսական դպրոցի հիմքի օրհնութեան մասնակցելու։

Այդ հիմնադրութիւնը հանդիսաւոր կերպով կատարւեց 1914 թւի յունիսի 29-ին։

## Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՄԱՍԵՐԸ։

,,Հաւատամք‘‘ սարը։ Սա գտնւում է վանքից Երզրում տանող ճանապարհին։ Սովորաբար ուխտաւորները հաւաքւում էին Երզրումում եւ 2-3 օրւայ ձիով յոգնեցնող ճանապարհորդութիւնից յետոյ վանքի խլաւզի (ուղեկցի) ուղեկցութեամբ կանգ էին առնում ,,Հաւատամք‘‘ սարի վրայ։ Այստեղ ամենքը իջնում էին ձիաներից, գլխաւոր խլաւզը հրացան պարպելով իմաց էր տալիս վանքին։ Վանքից դուրս էր գալիս միաբանութիւնը թափօրով, ուխտաւորները ծունկ էին չոքում եւ ասում էին ,,Հաւատամքը‘‘։ Այստեղից է սարի անունը։ Շարականներ եւ սաղմոսներ երգելով, կէս ժամ զառիվայրով իջնելուց յետոյ միաբանութիւնը ուխտաւորների հետ մտնում են վանք։

## ԴԵՒ-ՏՈՒՆ ՄԱՏՈՒՌ.

,,Դեւ-տուն‘‘ մատուռ, այսինքն դեւերի բնակարան։ Ըստ աւանդութեան Ս. Գ. Լուսաւորիչը այստեղ կատաղի կռիւ է մղել կռապաշտական քրմերի հետ Մամիկոնեան քրիստոնեայ, բարեպաշտ իշխանների աջակցութեամբ։ Բոլոր կուռքերը ջրհորն են ձգում եւ հողով ծածկում, որի վրայ եւ կառուցում են ,,Դեւտուն‘‘

Տարօնի գաւառ, այսինքն Մուշ քաղաքը իր դաշտով Մամիկոնեան իշխանական տոհմի սեփականութիւնն էր։ Նրանցից շատերը նոյն իսկ թաղւել են Ս. Կարապետի վանքի տաճարի մէջ. ինչպէս օրինակ՝ Թոռնիկ Սասունցին, Մուշեղ եւ Սմբատ Մամիկոնեանները-Վարդ-Պատրիկի որդի Ստեփանոսը, Գայլ-Վահանը։ Այստեղ է նաեւ Մամիկոնեան իշխանների ընդհանուր դամբարանը եւ Աթանագինէ եպիսկոպոսի շիրիմը։

Բայց վանքի գլխաւոր սրբավայրը Յովհաննու Կարապետի գերեզմանն է նրա մասունքներով, որ գտնւում է տաճարի հարաւային խորանում։

Ս. Կարապետի վանքը պաշտւում էր նմանապէս մահմեդականներից։ Քիչ չէին պատահում ուխտաւորներ նաեւ թուրքերից եւ քրդերից։

# Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ։

Երկրորդ անգամ ես այցելեցի այս վանքը 1916 թվին իբրև Կովկասեան զօրաճակատի զինուորական քահանայ։ Ես վանքը չճանաչեցի, այնքան փոխուել էր նրա արտաքինը։ Հայկական ընդհանուր կոտորածի ժամանակ, 1915 թվի յունիսին, Թուրքերը չխնայեցին և այս սրբավայրը, որ պաշտւում էր նոյն իսկ մահմեդականներից։



ԴԵՒ-ՏՈՒՆ։

Երիտասարդ Թուրքերը յանձին Էնվեր փաշայի և Թալաաթի ոչ միայն ուզում էին ոչնչացնել ամբողջ հայ ժողովուրդը, այլ և Հայաստանի ամենահին կոթողները։ Թուրքերը կողոպտում են ամբողջ վանքը տանելով նրա բոլոր հարստութիւնը։ Պայթեցնում են դինամիտով տաճարի երեք գմբէթները. քանդում են միաբանական խցերը. իսկ միաբաններին գազանաբար կոտորում։



Առանձնապէս ողբերգական է լինում վանահայր Վարդան վարդապետի վիճակը։ Ամենից յարգւած այդ ալեզարդ վանահայրը պաշտպան էր, ոչ միայն իր վանքի, այլ և Տարօնի իր ամբողջ հօտի։ Նա շատ անգամ է եղել Մուշի մութասարիֆ Սէրվէթ-բէյի մօտ միջնորդելու իր հօտի համար։ Սէրվէթ բէյը շատ էր ջղայնացած ռուս զօրքի և Անդրանիկի կամաւորական գնդի մօտենալուց։ 1915 թվի ամառը ռուս զօրքի մի մասը գեն. Նազարբէկեանի հրամանատարութեամբ մօտենում էր Մուշին Վանայ լճի հիւսիսային ափով, իսկ Տրուխին գեներալի խմբի կամաւորները յաղթական կերպով գալիս էին լճի հարաւային ափերով։ Հայերի մասնակի ջարդերը տեղի էին ունենում ամբողջ Մուշի դաշտում, սակայն յունիսի 24-ին տեղի ունեցաւ ընդհանուր հայկական կոտորած։ Ահա հէնց այդ ժամանակ տրագիկաբար ընկաւ և Վարդան վարդապետը։



ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ.

Նա կանչւում է Սէրվէթ-բէյի մօտ Սասունի հայերի ապստամբութեան պատճառով։ Սէրվէթը առաջարկում է նրան մահմեդականութիւն ընդունել, խոստանալով խնայել նրա կեանքը։ Ալեզարդ վարդապետը ձեռքով շփում է սպիտակ մօրուքը և դառն ժպիտով ասում. ,,Անվայել է, էֆէնդի, այս հասակումս կրօնս փոխել. Թող լինի Բարձրեալի կամքը''։ Վարդան վարդապետին կենդանի այրում են խարոյկի վրայ։ Նա նահատակւեց իր կրօնի և ժողովրդի համար։

Ես տեսայ վանքի աւերակները, տեսայ վանահօր հին բնակարանի շինութիւնը, գաւիթը, քանդւած դպրոցը և գրադարանը։ Ամենուրեք կործանման և ապականութեան կենդանի պատկերն էր։ Այդ ժամանակ այստեղ մնում էր կէս վաշտ երկրապահ զօրք։ Իմ ներկայութեամբ ծոյլ զինւորը ջանք էր դնում հանել շինութեան գերանը վառելիքի համար, փոխանակ անտառից կտրելու, որ աւելի հեշտ էր։

Միայն վանքի գաւթում հսող հրաշալի աղբիւրը շարունակում էր կչկչալ, յիշեցնելով Ս. Կարապետի վանքի նախկին պայծառութիւնը և եռուն կեանքը։ Ցեղագայում 1916 և 1917 թւի ձմրանը այստեղ էր տեղաւորուած 2-րդ հայկական հրացանաձիգ գունդը գնդապետ Սամարցեանի գլխաւորութեամբ, որ Նոր-Նախիջևանցի է և իբրև բարեպաշտ մարդ որքան հնարաւոր էր կարգի բերեց սրբավայրը։ Իսկ գնդի հովիւ Մուշի կոտորածից ազատուած միակ հոգևորական Եղիշէ քահ. Բարսամեանցի և երգիչ զինւորների շնորհիւ նորից հնարաւոր եղաւ վերսկսել ժամերգութիւնը։

Սակայն 1917 թւի դեկտեմբերին, երբ սկսեց Կովկասեան բանակի ընդհանուր նահանջը Ս. Կարապետի վանքը թողնւեց և կրկին անցաւ թուրքերի ձեռքը՝ ենթարկւելով ընդհանուր Հայաստանի բախտին։ Գուշակելով իր վիճակը վանքի միաբանութիւնը եկեղեցական անօթներից և հին ձեռագրերից արժէքաւորները թագցրել էր տաճարի զանազան գաղտնի պահեստներում։

1916 թւի ամառը Էջմիածնից այստեղ էր ուղարկուած Գիւտ վարդապետը, որին յաջողւեց թուրքերի և քրդերի կողոպուտից ազատուած իրերից բերել Էջմիածին ինչ որ հնարաւոր էր։ Ռուս զօրքի այստեղ մնալը ունեցաւ և իր բարեբար հետևանքը։ Դէպի ռազմական մեծ նշանակութիւն ունեցող այս վայրը շինւեցին խճուղիներ, այնպէս որ կարելի էր Խնուսի վրայով Մուշ գնալ աւտոմոբիլներով անգամ։

Այսպէս ցաւալի վերջացրեց իր գոյութիւնը հինաւուրց Ս. Կարապետը, սպասելով, թէ երբ կրկին կըգան պայծառ օրեր և բարեպաշտ ուխտաւորները նորից կվերականգնեն Հայաստանի այս կրօնական և կուլտուրական վայրը։

Ռ. ա ք. Բէկգիւլեան։

---

## ՄՈՒՇ.

Սա Մշոյ դաշտի գլխաւոր քաղաքն է, որ թէև մտնում է Բիթլիսի վիլայէթի մէջ, սակայն վարչական տեսակէտից գաւառական քաղաքից աւելի մեծ տեղ ունէր։ Մշոյ դաշտը ունի 80 վերստ երկայնութիւն և 35 վերստ լայնութիւն։ Նա ոռոգւում է Արևելեան Եփրատ գետով և սրա Արածանի վտակով։ Մշոյ դաշտում կան 104 հայկական և քրդական գիւղեր։ Դեռ ևս Քսենոֆոնտ պատմագիրը 2000 տարի սրանից առաջ յիշում է այս դաշտը։ Բաբելոնից վերադարձող յունական զինւորները ըստ Քսենոֆոնի մտնում էին հայկական գիւղերը և այնտեղ կուլ մեծ կարասներից գարուց պատրաստուած խմիչք էին խմում (գարեջուր)։ Հարուստ և խիտ բնակչութիւն ունեցող Մուշը և նրա դաշտը ներկայումս աւերակների կոյտ են ներկայացնում։ Մինչև հարիւր հազարի հասնող հայ բնակչութիւնը քիչ չափով է աքսորված հեռու տեղեր, մեծ մասամբ անխնայ մորթոտուած է, այն էլ զանազան տեղ զանազան ձևերով։ Մուշի և նրա դաշտի շրջակայքում կան բազմաթիւ հայկական եկեղեցական ճարտարապետական հնութիւններ։ Օրինակ՝ Աշտիշատի աւերակները տառերի գետի հեղինակ Ս. Սահակի գերեզմանով, Մատնավանքը՝ Աւրան գիւղի մօտ. Ս. Յովհաննէսր, Առաքելոց վանքը, որտեղ գտնւում էին ըստ աւանդութեան պատմագիր Մովսէս Խորէնացու, Դաւիթ Անյաղթ Փիլիսոփայի և այլոց շիրիմները։

Մշոյ սարերը ծածկուած են խիտ և մանր կաղնիներով։ Յուլիսի վերջերին կամ օգոստոսի սկզբներին անտառներում առատ ցօղ է երևում, որի հետ բացառապէս կաղնի ծառերի տերևների վրայ մանանայ է իջնում։ Մանանան սպիտակ բարակ գնդակների կամ 2—4 միլիմետրի չափ թեփերի ձևով է։ Մանանան ժողովուրդը հաւաքում է, թափ տալով ծառերից սաւանի վրայ կամ մաղի մէջ, կամ ուղղակի պոկելով ծառերի տերևները։ Մանանան ուտում են կամ պանրի հետ և կամ խաշած խառնում են փլաւի հետ։ Համ մանանան համեղ չէ և ստամոքսի համար գժւարամարս է։ Բայց որովհետև նա քաղցրահամ է, ուստի նրանից



հալւա են պատրաստում, որ կանաչ գոյն ունի ծառի տերևներից առաջացած։ Այդ հալւան, որ կոչւում է կազբէ, բաւական համեղ է և ուխտաւորները տուն են



ՄՈՒՇ.

տանում Ս. Կարապետի հալւա անունով։ Մանանան այս շրջանի ամենանշանաւոր բերքն է։ Հայաստանի ոչ մի այլ մասում մանանայ չի լինում։

Ռ. ա. ք. Բէկգիւլեանց.

---

## ՍՄԲԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱԱԴԷԹԵԱՆ.

Այժմ հանգուցեալ Սմբատ եպիսկոպոսը Կարնոյ հայոց թեմի վերջին առաջնորդն էր։ Նախնական կրթութիւնը ստանալով Արմաշի դպր. վանքում՝ Օրմանեան պատրիարքի ղեկավարութեամբ նա յետագայում իր կրթութիւնը լրացրեց ինքնազարգացմամբ։ 45 տարից ոչ աւել հասակում նա արդէն առաջնորդական պատասխանատու պաշտօն էր վարում։ Իբրև հմուտ թրքական, արաբական, ֆրանսիական և հայկական լեզուներին նա շատ հետաքրքիր զրոյցներ էր համարւում Էրզրում այցելող Եւրոպական հիւրերի համար։ 1915 թւի ր նրա կեանքում ճակատագրական եղաւ։ Թուրքերը որոշել էին հայերին Միջագետք աքսորել։ Սմբաթ եպ. ստիպուած էր բազմիցս միջնորդել իր հօտի համար։ Նա նոյն իսկ վիրաւորանքների էր ենթարկւում։ Սակայն իբրև Հայաստանեայց եկեղեցու զաւակ նա պատրաստ էր նոյն իսկ կեանքը զոհել։ Արդէն թուրք կառավարութիւնը սկսել էր աքսորել հայերին հարիւրաւոր ընտանիքներով

Յուլիսի վերջերին մնում էին ընդամենը 30 ընտանիք արհեստաւորներ, որոնք հարկաւոր էին թուրքերին։ Տեսնելով որ իր հօտը աքսորւած է հեռու վայր և սարսափելի հալածանքներ է կրում ճանապարհին, քաջ հովիւը խնդրեց իբրև ողորմածութիւն թոյլ տալ իրեն ևս գնալ միանալու այդ տարագիրներին և նրանց հետ ըմպել իր դառն բաժակը։

Վերջին օրն է։ . . .



ՍՄԲԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱԱԴԷԹԵԱՆ.

Մնացորդ հայերը հաւաքւել էին Երզրումի մայր եկեղեցու գաւթում։ . . . Արհին ծնկաչոք աղօթում է հինաւուրց տաճար կոչւած մատրան առաջ։ Նրա աղօթքը յիշեցնում էր Տիրոջ աղօթքը Գեթսեմանի պարտիզում։ Ապա, վերկենալով, օրհնում է ամենքին և, հրաժեշտ տալով, կառք նստում ու թրքական զապտիէների ուղեկցութեամբ ճանապարհւում Երզնկայ. ուրտեղ հայոց հասարակաց գերեզմանատանը դազանաբար մորթւում է թրքական ժանդարմների ձեռքով։ Սմբատ եպիսկոպոսը իր մահով ապացուցեց, որ Հայաստանեայ եկեղեցու լաւագոյն զաւակները գիտեն մեռնել իրանց եկեղեցու և հօտի համար։

Յաւէրժ յիշատակ բազմաչարչար Հայաստանի արժանաւորագոյն զաւակին։ . . . .



## ՔԵՄԱԽԻ ԿԱՄՈՒՐՋԸ

Այս կամուրջը շինւած է Տաճկաց-Հայաստանի Քեմախ քաղաքի և բերդի մօտ արևմտեան Եփրատի վրայով։ Անցնելով Երզնկայի հովտով, Եփրատը հոսում է նեղ կիրճով, որտեղ հազարաւոր հայեր գտան իրանց գերեզմանը։ Կիրճի վերջում գտնւում է Քեմախ քաղաքը և բերդը։ Այստեղ է կամուրջը։ Հնումը այսբեր-



գը կոչւում էր Անի ամրոց։ Այստեղ էին պահում իրանց տոհմային գանձերը Արշակունեաց տոհմի հայ թագաւորները։ Ներկայ պատերազմում Քեմախի կամուրջը յայտնի դարձաւ նրանով, որ թրքական ժանդարմները այստեղից էին ցած նետում իրար հետ կապուած հայերի դիակները։ Ականատեսները պատմում են, որ դիակներից պատնէշ էր գոյացել և գետի ջուրը անցնում էր կամրջի վրայով ու դուրս է եկել ափերից։

# Բ Ա Բ Ե Ր Դ .

Բաբերդը, որ Տաճկայ-Հայաստանի գաւառական քաղաք է, գտնւում է Ճորոխ գետի կիրճում Գայլգէտի, Տրապիզոնի և Կարնոյ ճանապարհների հանգոյցում։ Մեր նկարի վրայ երեւում են հին բերդի աւերակները, որ ըստ աւանդութեան կառուցել են Ճենովացիները։ Սակայն Հայաստանի պատմութեան մէջ այս բերդը յայտնի է աւելի վաղ։ Հաւանական է, որ Ճենովացիները այն վերաշինել են միայն։ Քսենոփոն պատմագիրը իր „Անաբազիս"-ում յիշում է Բաբերդը Գիմնիաս անունով։



Առաջին անգամ ռուս զօրքերը գրաւեցին այս քաղաքը առանց կռուի 1829 թ. յուլիսի 7-ին, գեն. Բուրցովի առաջնորդութեամբ։ Վերջինիս սպանութիւնից յետոյ գեն. Պասկեւիչը գրաւեց այն կրկին սեպտեմբերի 27-ին։ Ներկայ պատերազմի ընթացքում Բաբերդը պաշարելով գրաւեց 1916 թ. յուլիսի 3-ին և մնաց Ռուսների ձեռքին մինչև 1917 թ. վերջը, երբ Կովկասեան բանակի նահանջելուց, նա կրկին անցաւ Թուրքերի ձեռքը։ Բաբերդում և նրա գաւառում ապրում էին մինչև 30 հազար հայեր։ Նրանք բոլորը կոտորուեցին ընդհանուր կոտորածի ժամանակ։ Իմ երկրորդ այցելութեանս ժամանակ 1916 թ. յուլիսի կէսերին, այստեղ կային ընդամէնը մօտ 300 հոգի ամեն հասակի հայեր։



# ՇԱՏԱԽԻ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԸ ՄԱՆԵԼԻՍ։

Շատախը Հայաստանի փոքրիկ լեռնային գաւառ է, Վանայ լճի հարաւային ափում։ Սրա լեռնային դիրքը բնակիչներին հնարաւորութիւն է տալիս խաշնարածութեամբ պարապելու։ Շատախի այծերը և ոչխարները յայտնի են իրանց բարակ բուրդով։ Գաւառի գլխաւոր կենդրոնական գիւղը Շատախը յայտնի էր իր ջուլհակագործներով, որոնք լաւ և գեղեցիկ բրդեայ գործուածքներ էին գործում։ Շատախի բրդեայ գործուածքները զանազան գոյների և նկարներով էին։ Վանայ քրդերը շատ էին սիրում այս գործուածքները, այդ պատճառով շատախցիները ձեռնատու գներով



էին վաճառում իրենց ապրանքները Վանի շուկայում։ Իբրև լեռնականներ շատախցիները շատ խիզախ են և պատերազմասէր։ Վտանգի րոպէին ամէնքը տղամարդ թէ կին, ծեր թէ պատանի մի մարդու պէս դուրս էին գալիս պաշտպանելու իրանց գիւղերը քրդերի յարձակումների դէմ։ 1915 թւին նրանք ամենից առաջ բարձրացրին ապստամբութեան դրօշակը, իսկ նրանց հետեւից Վանը։ Ներկայումս Շատախը թալանուած և քանդուած է, իսկ բնակիչները, որպէս գաղթականներ. թափառում են օտարութեան մէջ։ Նրանց հօտերից հետք անգամ չի մնացել։ Դժուար է երբեւիցէ վերականգնել շատախցիների տնայնագործութիւնը։



ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ԴՐՕՇԱԿԸ.



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ։

Ազգային Խորհուրդը 1918 թ. յուլիսի 4-17 Թիֆլիսից մեկնեց դէպի Երեւան, վճռելով իր կազմը լրացնել այնտեղ տեղական ույժերով և նոյնը անել նախարարական կազմի վերաբերմամբ։ Ազգային Խորհրդի յանձնարարութեան համաձայն Ռուբէն Քաջազնունին պիտի կազմէր մինիստրական կազմը պէրսոնալ սկզբունքի հիման վրայ։ Քաջազնունին ,,Դաշնակցութեան'' կուսակցութեան ներկայացուցիչն էր և նրա հնագոյն անդամներից։ Նա պարագլուխն էր այն պատգամաւորութեան, որը ստորագրեց Բաթումում յունիսի 2-ին Տաճկաստանի հետ խաղաղութեան և բարեկամութեան դաշինքը։ Յուլիսի 22-ին Երեւանում կատարուեց Հայաստանի անդրանիկ պարլամենտի բացումը թէև հանդիսաւոր կերպով, սակայն բաւական ճնշուած տրամադրութեան ներքոյ, որովհետև մի կողմից թշնամին մեր նոր մայրաքաղաքից ընդամենը 6 վերստ հեռաւորութեան վերայ էր կանգնած, իսկ միւս կողմից պատերազմը դեռ վերջացած չէր և յայտնի չէր, թէ ինչով կը վերջանար և թէ ինչպիսի փորձութիւններ դեռ կարող էին թափուել հայ ժողովրդի գլխին։ Ժողովուրդը տառապանքի մէջ էր, իսկ Հանրապետութեան բնակչութիւնը կազմուել էր ոչ թէ մշտական ազգաբնակութիւնից, այլ մեծ մասամբ փախստականներից։ Այս բոլորը, իհարկէ, պէտքէ անդրադառնային հանդիսականների հոգու վերայ։ Ամենքը սակայն զգում էին բոլէի լրջութիւնը և թէ այն՝, որ այդ բոլէին դրւում էր Հայաստանի ապագայ մեծ շինութեան հիմնաքարը։ Հայ ազգը այնքան զոհեր տառապել էր, այնքան անգամ, յուսախաբուել էր և մանաւանդ այս պատերազմի ընթացքում որ խորհրդի բացման ժամանակ տիրող ծանր ու ճնշող տրամադրութիւնը լիովին հասկանալի է։

Բացման օրը Գերագոյն Խորհրդի նախագահ Աւետիկ Սահակեանը յայտարարեց, որ Հայաստանը կառավարող Գերագոյն իշխանութիւն ունեցող Խորհուրդը այսուհետև պիտի կոչուի ոչ թէ Ազգային Խորհուրդ ըստ առաջնի, այլ ,,Հայաստանի Խորհուրդ'', դրանով շեշտելով այն իմաստը, որ նորակազմ իշխանութիւնը պիտի ղեկավարէ միայն նոր հանրապետութեան և ոչ թէ համայն Հայութեան գործերը։

Բացման հանդէսին ներկայ էին Տաճկաստանի, Աւստրո-Ունգարիայի, Պարսկաստանի և Ադրբէյջանի ներկայացուցիչները։ Գերագոյն Խորհրդի նախագահ, ալեզարդ Ա. Սահակեանը հանդէսը բացեց հետևեալ ճառով։

Քաղաքացիներ, Հայաստանի Խորհրդի անդամներ, Հայկական Գերագոյն Ազգային Խորհրդի անունով ես պատիւ ունիմ բանալու այսօր Հայաստանի Խորհուրդի առաջին նիստը և յայտարարել, որ այսուհետև Հայաստանի Խորհուրդը միակ լիազօր մարմինն է, որ իր մէջ ամփոփում է Հայաստանի Հանրապետութեան պետական իշխանութեան ամբողջ լիազօրութիւնը։

Պատերազմի չորս տարին, յեղափոխութիւնը, ռուսական զօրքերի անկազմակերպ հեռանալը, ռուսաց պետութեան քայքայւելը, ֆրոնտում եղած անյաջողութիւնները, գաւառների կորուստը, Անդրկովկասի երեք պետութեան բաժանւելը, այս բոլոր խոր ցնցումները չէին կարող ողբալի հետք չը թողնել: Երկրի տնտեսական ու ֆինանսական դրութեան կատարեալ քայքայում, արդիւնաբերական և ապրանքների փոխանակութեան կատարեալ դադարում ուտեստի մթերքների սուր պակաս, բացակայութիւն և կամ սոսկալի թանգութիւն առաջնակարգ նշանակութիւն ունեցող բարիքների, դրսից բերելու կատարեալ անկարելիութիւն, երկաթուղային հաղորդակցութեան և յարաբերութիւնների կատարեալ ընդհատում, հարիւր հազարաւոր սոված և անտուն փախստականներ, սահմանների անապահովութիւն և որպէս անխուսափելի հետևանք այս բոլորի անիշխանութիւն, ահա ինչ սոսկալի պայմաններում գործի կոչւած է իմ կառավարութիւնը:

Բացառիկ պայմանները նախորոշում են, իհարկէ, կառավարութեան բացառիկ բնոյթը: Նա անկարող է տարւել որևիցէ լայն ծրագիրներով և անհրաժեշտօրէն պիտի սահմանափակէ իր գործունէութիւնը ամենանեղ շրջանակի մէջ պետական այնպիսի խնդիրների շուրջը, որոնց անկարելի է յետաձգել:

Կասեցնել քայքայման ընթացքը, դուրս բերել երկիրը անիշխանութեան ճիրաններից. ստեղծել պայմաններ, որոնց շնորհիւ կարելի լինի պետական շինարարութիւնը-ահա ինչպէսէ հասկանում իր կոչումը ներկայ կառավարութիւնը:

Համաձայն վերոյիշեալի կառավարութիւնը իր առաջ դնում է հետևեալ խնդիրները:

## Ա. Ներքին քաղաքականութիւն

1· Հաստատել երկրում տարրական իրաւակարգ.
2. Վերականգնել պոստ-հեռագրային յարաբերութիւններ.
3. Եռանդուն միջոցներ ձեռք առնել՝ մեղմացնելու պարենաւորման գործի երկրում տիրող սուր կրիզիսը.
4 Կարգաւորել գաղթականական խնդիրը՝ մասամբ վերադարձնելով գաղթականներին իրանց հին բնակավայրը, մասամբ համաչափօրէն բնակեցնելով նրանց նոր բնակավայրերում, և
5- Նախապատրաստել Հայաստանի հիմնադիր ժողովի շուտափոյթ գումարումը:

## Բ. Ֆինանսներ

Հող պատրաստել ստեղծելու հաստատ հիմունքներ սեփական դրամական սիստեմի համար. միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու երկիրը դրամանշաններով, վերականգնելու արդիւնաբերութիւնն և ապրանքափոխանակութիւնը, այլև մշակել հարկային առողջ սիստեմ:

## Գ. Զինուորական գործը

Վերակազմել մեր ունեցած զինուորական ոյժը՝ ստեղծելու համար քանակով ոչ մեծ, բայց ոգով և դիսցիպլինայով ուժեղ մի բանակ:

## Դ. Արդարադատութիւն

Յարմարեցնել դատարանը երկրի քաղաքական իրաւադրութեանը, միաժամանակ քրէական արդարադատութեանը մասնակից անել ժողովրդի ներկայացուցիչներին,



## Ե. Արտաքին քաղաքականութիւն

1. Ամրապնդել օսմանեան կայսրութեան հետ կնքւած հաշտութիւնը և հաստատել բարի դրացիական յարաբերութիւններ նրա հետ: Խստիւ հետևել և ջանալ, որ Թիւրքիան ևս հետևէ յանձն առած փոխադարձ պարտականութիւններին: Մասնաւորապէս անյապ լուծել խնդիրները՝ օսմանեան զօրքերի Հայաստանի սահմաններից հեռացնելու մասին և գաղթականներին հայրենիք վերադառնալու մասին:
2. Լուծել համաձայնութեամբ Ադրբէյջանի և Վրաստանի, այս պետութիւնների և Հայաստանի սահմանների խնդիրը, իբրև հիմք ընդունելու էտնիկական (ազգաբնակչական) սկզբունքը:
3. Ադրբէյջանի և Վրաստանի հետ լիկվիդացիայի ենթարկել ընդհանուր հաստատութիւնները և գոյքը, որ մնացածէ Անդրկովկասեան հանրապետութիւնից:

Այս է կառավարութեան ծրագիրը, որը կարելի է անւանել պետական գոյութեան առաջնակարգ և ամենաանհրաժեշտ ապահովումների ծրագիր:

Իհարկէ, որ այս ծրագիրը բոլորովին չէ լրացնում երկրի բոլոր բազմատեսակ կարիքները և որ դրանից դուրս մնում են մի շարք չափազանց լուրջ և բաւականաչափ հասունացած խնդիրներ: Սակայն կառավարութիւնը այդ խնդիրները չէ համարում հրեթական, որովհետև նրանց լուծումը արդի պայմաններում և նկատելի է համարում: Կառավարութիւնը չէ կամենում ձգել երկիրը ախալանքի մէջ, իր լայն հեռանկարներով և անիրագործելի խոստումներով, չէ կամենում իր վրայ վերցնել ուժից վեր պարտականութիւններ:

Կառավարութիւնը համոզւած է, որ առաջարկւած ծրագիրը կարելիութեան մաքսիմումն է: Նա կը դնէ իր բոլոր ոյժը և բոլոր իմաստութիւնը այդ նպատակին հասնելու համար և յոյս ունի յաջողութեամբ լուծել եթէ ոչ բոլորը, գէթ խնդիրների մի մասը-սակայն պայմանով, որ իր կողմը կունենայ Խորհրդի լիակատար վստահութիւնը և աջակցութիւնը:

## Հայաստանի Խորհրդի Կազմը

1. Աhարոնեան Ա.
Սահակեան Ա.
Տիգրանեան Ս.
Խաչատրեան Ս.
5. Թորոսեան Հ.
Բաբայեան Ա.
Սարգսեան
Տ-Մինասեան Ռ.
Տ-Միքայէլեան
10. Ղազարեան Ա.
Դրօ
Բուդաղեան Յ.
Ռաշմաճեան Տ.
Տաշեան
15. Տ-Յակոբեան
Սարգսեան
Վանցեան
18. Աստուածատրեան

Դաշնակ. կուս.

19. Տ-Յակոբեան բժիշկ.
20. Զուբեան Դ.
Խոնդկարեան Ա.
Տ-Օհանեան
Մուշեղեան Տ.
Աւետիքեան Ա.
25. Մելիքեան Ա.
Ազատեան Գ.
Աւթալբէկեան Տ.
Ղարաբէկեան Մ.
Մ-Ազաջանեան Դ.
30. Զաքարեան Յ.
Մալխասեան Ս,
Մխիթարեան Ա.
Տ-Խաչատրեան Գ.
Մելիքեան Յ.
35. Ենգիբարեան Գ.
Տ Մարտիրոսեան Մ.
Զարքարեան Գ.
38. Մամիկոնեան Ս.

Ժողովրդ. կ. | Ս-Դ. կուս. | Ս.-Յեղ. կուս. | Չեզոք

## ԽՈՐՀՐԴԻ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ.

39. Սէիդ Ռիզա Գաբաև
40. Միրզա-Ջաբար Մամեդով
41. Ասկեր Ազար Իսմայիլով
42. Միր Թագի՛ր Միր-Բաբաև
43. Մամէտ-Բէկ Մամէդ-Բէկով
44. Ասադ բէկ Ազարբէկով

(39–44:) Մահմեդական. Ներկայացուցիչ.

45. Զորին Իվ. Իվ. ռուսների ներկ.
56. Իւսուֆ-բէկ Բէ յՄիրազով եզիդին. ներ.

---

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ.

Ռ. Յ. Քաջազնունի (նախագահ)
Ա. Յ. Խատիսեան (արտ. գ. նախարար)
Խաչ. Կարճիկեան (ելմտից նախ.)
Արամ Մանուկեան (ներք. գործ. նախ. ար.)
Գեներալ Ախվերդեան (զին-նախար.)
Գ. Տ-Պետրոսեան (արդար. նախար.)

---



## ՎԱՆ ՈՒ ՍԵՒԱՆ

Շատ ու շատ դարեր առաջ Բզնունեաց ծովի շուրջը եռում և ալեկոծում էր երկու հինաւուրց ազգերի պայքարը: Սուրբ Գրքի մէջ յիշատակւած Ասորեստանի հզօր բռնակալները՝ Սարգոն, Սալմանասար և սրանց նմանները տարեր շարունակ կռւում էին Վանի կամ Ուրարտուի թագաւորների հետ: Ազգերի մրցում էր այդ, հսկաների կռիւ, արեան ու սեմիտական կուլտուրաների մաքառում: Սեմիտները ձգտում էին դէպի Հիւսիս և աշխատում դուրս վանել Ուրարտուի բնակիչներին, այսինքն նախահայերին այն բարձրավանդակից, որը տարածւած է Վան ու Սեւան լճերի մէջ: Այդ բարձրավանդակը, որ հին ժամանակներից հայերի երկիրն էր, բանալի էր հիւսիսային երկիրները տիրելու կամեցողի համար: Այդ դարաւոր մաքառումը, որ սերունդների յիշողութեան մէջ տպաւորւեց Բէլի (Ներրովդի) և Հայկի կռիւը պատմող առասպելում, վերջացաւ սեմիտների յաղթանակով:

Ուրարտացիները քաշւեցին դէպի Հիւսիս, Երասխ գետի հովիտը և Սեւան լճի ափերը: Սրբազան Մասիսի ստորոտներում ու Սեւանի ափերին ուրարտացիները նորէն ուժեր ժողովեցին նոր կռիւ մղելու ու գոյութիւն պահպանելու համար, խաղաղ և կուլտուրական կեանքով ապրելու իրաւունք ձեռք բերելու համար: Բաղդը երբեմն ժպտում էր: Ճակատագիրը նորէն վերադարձնում էր մեր նախնիքներին դէպի Վան, որի խոհուն ու գիտակից, շինարար թագաւորները հիմնում էին սակաւ ջրանցքներ, կամուրջներ և շինում ճանապարհներ ու խաղաղ քաղաքականութեամբ, խելացի տնտեսութեամբ իրենց երկիրը հարստացնում:

Սակայն այդ հարստութիւնը հարեւանների նախանձն էր շարժում մերթ Ասորեստանցիների և Բաբելացիների, մերթ Հռովմայեցիների ու Պարթեւների, մերթ Յոյների ու Արաբների, մերթ Մոնղոլներ ու Թուրքերի, որոնք գալիս և անցնում էին երկրի վրայով և ճանճերի նման անյայտանում:

Շատ անգամ աւերւել է Հայաստանը թշնամու հարւածների տակ ու նորէն վերածնւել . . . և քանի՜ անգամ . . . Դարերին յաջորդում էին դարերը, իսկ Վանը ու Սեւանը միշտ մնում էին Հայաստանի հարաւային և հիւսիսային բեւեռներ, միշտ աւերւող և վերածնւող Հայաստանի: Իսկ այժմ: Ա՜յժմ, միթէ չենք տեսնում ու ապրում բազմիցս կրկնւած բազմաչարչար Հայաստանի պատմութիւնը: Հայաստանի Հանրապետութի՛ւն

Նոր չլսւած մի բան . . . Սեւանի ափերին, իր հիւսիսային բեւեռին սեղմւել է այդ փոքրիկ երկիրը: Հին նահապետական Հայաստանը աւերւած է, իսկ նրա բնակիչները տերեւների նման ցրւած են երկրագնդի զանազան կողմերը: Թւում էր, որ ամեն ինչ վերջացել էր և այլ ևս յոյս չէր մնացել, որովհետև վերջին յոյսն էլ մարել էր: . . ,

Պատերազմը դեռ շարունակւում է և մոխրակոյտ Բելճիկայի հովիտներում վճռւի առարկայէ ազգերի բաղդը, իսկ մեր յօռետեսները սկսել են Հայաստանի Թաղման հանդէսի զանգերը ղօղանջեցնել։ Վհատութիւնը տիրեց նրանց։ Նրանք չեն հաւատում հայրենիքի վերածնութեան, չեն կարող հաւատալ, չգիտենալ հաւատալ..։

Կանգ առէք զանգահարներ, դադարեցրէք ձեր զանգահարութիւնը . . . Հայաստանը դեռ մեռած չէ, նա միայն կծկւել-սեղմւել է, կամ աւելի ճիշտ է ասել, նրան խեղդել, նորից սեղմել են Սեանի նախապատմական ափերին ու սրբազան Մասիսի ստորոտներին։ Տեսէք. նրա որդիքը. տրտում կոխկրտում են իրար, նրանք տեղ չունեն ապրելու, արիւնով ու քրտինքով ողողելու դաշտերից զուրկ են, որովհետև նրանց երկրի մի մասը լիճ է, իսկ միւսը՝ այդ լիճը շրջապատող լեռները։ Թշնամին յափշտակել է ամեն ինչ, որ արժէք ունի։ Ճիշտ է, Թորգոմի որդիքը յաղթւած են, սակայն ընկճւած չեն հոգով։ Թշնամին անգամ հասկացաւ, որ աւելին անել չէ կարելի և առաջ շարժւելը անհնար է։

Խեղդւողի ձայնով, սակայն հպարտութեամբ հայերը յայտարարեցին իրենց փոքրիկ երկրի անկախութիւնը։ Հանրապետական Հայաստանի նախարարապետը կարդաց իր անդրանիկ դեկլարասիօնը . . . Քաղաքական կեանքը նորէն կենդանութիւն առաւ Հայաստանում։ Վառւեց փոքրիկ կայծը ապագայ մեծ օջախի։ Նորածին հանրապետութեան դեկլարասիօնը յանկութիւն է յայտնում գլխաւորապէս իր ազգի ֆիզիքական գոյութեան մասին, խաղաղ համակեցութեան մասին հարևանների հետ, ճանապարհների հաղորդակցութեան, փաստային յարաբերութիւնների կանոնաւորման մասին։ Բարի յաջողում . . .

Մանուկ Հայաստանը ապրել սկսեց, նա կեանք է ուզում։ Առհասարակ, յոռետեսները ամեն ինչ անձամբ տեսնել են ցանկանում և բաղդը և բարգաւաճումը հայրենիքի, իսկ եթէ գործը իրենց ուզածի հակառակ է ընթանում, յուսահատւում են։ Մենք լաւատեսներս, բաւականանում ենք քչով, ուստի ցանկանում ենք հայրենիքի կատարեալ բաղդաւորութիւնը տեսնել մեր յետնորդներին։ Կը գայ ժամանակ, կը վերջանայ պատերազմը և կը գումարւի ազգերի մեծ համաժողովը ազգերի բաղդը տնօրինելու և այդ վեհաժողովում տեղ կունենայ, իր համեստ տեղը, Սեանի Մանուկ Հանրապետութեան ներկայացուցիչը ու այնտեղ նա կասէ. ,,Մեր ցեղը իրաւունք ունի տէր լինելու իր հայրենի երկրին, որ դարերով շաղախւել է նրա արիւնով։ Արիւնածարաւ աշխարհը ազատութեան համար նրանից արիւնաթաթաւ զոհեր պահանջեց։ Այդ զոհերը տրւած են։ Բացէք շրջանակը, տւէք ճանապարհ մեր ազգին Սեանից դէպի հայրենի Վանը...‘‘

Եւ կը լսւի այդ Թոյլ, բայց հպարտ ձայնը։ Ու նորէն Հայկի որդիքը կդիմեն Սեանից դէպի Վան, այդ աւետեաց երկիրը՝ նորոգելու, վառելու իրենց մարած օջախը։



Այն ժամանակ նորէն կը կանաչեն դաշտերը, կը ծաղկեն պարտէզները և աշխատաւոր գիւղացն նորէն կերգէ իր երգը, իսկ հովիւը կը նւագէ իր սրինգով։ Գեղջկուհին ազատ կերգայ դաշտերը հայրենի հողի հոտաւէտ ծաղկունքներով կը հիւսէ իր ծամերը, իսկ եկեղեցիների զանգերի ղօղանջը նորէն կը լցնէ օդը ու կը բարձրանայ դէպի երկինք։

Հին Ուրարտացիների յաջորդները կը լինեն նոր մարդիք, նոր սերունդ և նոր գաղափարներով և կսկսւի նոր, լաւ ու շինարար կեանք։ Պէտք է միայն խաղաղութիւն և հանգիստ։

Հայաստանը կլինի իր ժողովրդի համար մի պանծալի շտեմարան։ Ես շնչել եմ նրա կազդուրող լեռնային օդը, տեսել ցուրտ, բայց առողջարար ձմեռը և միշտ զով ամառնային գիշերները։ Հարաւային արևը, մեծ գետերը, հացաբեր հողերի ընդարձակ տարածութիւնները, հանքերի առատութիւնը-դա երկրի այնպիսի բարեբաղդ արժանաւորութիւններ են, որ պէտք է մարդու մէջ զարգացնեն հոգի և ոյժ և հարկադրեն նրան առատ լոյսի մէջ բացւել ծաղկի պէս։ Մարդ զգում է, որ զանազան պատճառներով Հայաստանը իր պատմութեան և ոչ մի շրջանում չի օգտւել լիովին այն բարիքներից, որ ճակատագիրը տւել է նրան և, ակամայ, յոյսով և հետաքրքրութեամբ սպասում է, թէ ինչ կը բերէ նրան ապագան՝ Սեան ու Վան, թէ Թաղման զանգահարութեան ղօղանջ։ . .

Ռ. ա ք. Բէկգիւլեան։

## ՎԱՆԱՅ ԼՃԻ ԱՓԵՐԻՆ.

Իմ երկար Թափառումների ժամանակ քանիցս անգամ ես պտտել եմ Վանայ լճի շուրջը։ Վերջին անգամ ես այնտեղ էի 1917 Թ. հոկտեմբերին։ Այն ժամանակ ռուս զինւորները շշուկով խօսում էին՝ ,,պէտք է տուն վերադառնալ, այստեղ աւելորդ է մնալ։‘‘ Կովկասեան հրացանաձիգ երկրորդ դիվիզիայի զինւորները, երեք տարի շարունակ Թշնամու դէմ կռւելուց և դիրքերում անփոփոխ մնալուց յետոյ, իհարկէ, յոգնած էին զգում իրենց, ուստի ժողովներում միշտ ծեծում էին մնալ-հեռանալու խնդիրը։

Գիտակիցները աշխատում էին պահել ընկերներին մինչև փոխարինող մասերի գալը, խնդրում էին չը Թողնել դիրքերը և զօրքին պատկանող Թանգարժէք պիտոյքները։

Այդպիսի մի ժողովից յետոյ, ծանր տրամադրութեան տակ, ես գնացի լճի ափը։ Վերջալոյս էր։ Հրաշալի տաք եղանակ։ Հեռւում երևում էր ալեզարդ Սիփանը՝ ծովի դարաւոր պահապանը։

Կապոյտ երկնքով, ճզմելով հասնել իրար յետևից, սահում էին բարակ ամպերը, անդրադառնալով լճի ջրերում, իսկ արևի բեկանուող ճառագայթները ստեղծագործում էին լոյսի սքանչելի էֆֆեկտներ։ Հարաւային ափերի լեռնաշղթայի ստուերանկարները, արտափայլելով լճի կապտութեան մէջ և խառնւելով ամպերի ստուերների հետ ստեղծում էին կախարդիչ տեսարան։ Թւում էր, թէ մէկը, նստած ծովի յատակում, կինեմատոգրաֆի միջոցով ի ցոյց էր հանել այդ սքանչելի պատկերները։

Հիանալի էր ծովը հին Խլաթի աւերակների կողմից։ Վիթխարի ընկուզենիների ստուերների տակ ակամայ ես ուզեցի ձգւել և հիանալ անվերջ . . .

Յանկարծ իմ լսողութեանը հասաւ շոգենաւի զիլ սուլոցը, Ինչէ այդ։ Միթէ շոգենաւ էր։ Այո, անկասկած, մի փոքր տափա-յատակ նաւ։ Մօտենում էր Խլաթի նաւահանգստին։ Նաւի վրայ խռնւած էին բազմաթիւ ճանապարհորդներ, իսկ ափում աւելի ևս։

Ուղևորները, իջնելով, ցրւում էին զանազան կողմեր, իսկ բեռնակիրները բարձում էին նրանց կապոցները զանկակներով զարդարւած էշերի և ջորիների վրայ։ Վերևում կային բազմաթիւ կառքեր և աւտոմոբիլներ։

Ես տրորում էի աչքերս, որովհետև չէի հաւատում տեսածիս։ Բայց ոչ, այս բոլորը իրականութիւն էր։ Ես բարձրացայ դէպի վեր և սկսեցի թափառել։ Ամենուրէք ամառանոցներ և ագարակներ, ամենուրէք խանութներ ու մեծ-մեծ ռեկլամներ։ Զբօսամեքենաների սուլոցները աւելի ևս զարմանք պատճառեցին ինձ։ Ցուցանակները ապացոյց էին, որ հին Խլաթի աւերակների վրայ ամառանոցներով, ֆերմաներով ու գործարաններով նոր քաղաք է հիմնւել։ Երկաթուղու գնացքները բերում ու տանում էին բազմաթիւ ճանապարհորդներ։ Սարերում գործում էին զանազան գործարաններ, իսկ պարտէզներում պատսպարւել էին ամառանոցների գեղեցիկ շինութիւնները։

Ամբողջ ամառը այստեղ լողանալու սեզոն էր, որովհետև ապացուցւել էր, որ լճի ջուրը աւելի օգտակար էր, քան թէ մեծ ծովերի աղի ջուրը։ Ծովի մակերևոյթից 6000 ոտնաչափ բարձրութիւնը հնարաւորութիւն էր տւել բանալու այստեղ բազմաթիւ բուժարաններ, հանքային ջրերը գրաւել էին գիտնականների և ձեռներեց մարդկանց ուշադրութիւնն և հին պատմական Խլաթը դարձել էր համաշխարհային բուժավայր։ Հիւանդներից ոմանք գալիս էին լողանալու, ոմանք ենթարկւում էին իրանց 6-7 հազարանոց բարձրութեան վրայ լոյսի և օդի բժշկութեան, ոմանք ուղղակի հանգստանալու և լճի վրայ նաւերով զբօսնելու, ոմանք էլ որսի, որովհետև Խլաթի սարերում և անտառներում որսի լաւ տեղեր շատ կար։

Լճի շուրջը այդպիսի բուժատեղիներ շատ էին հիմնւել։

Յարաբերութիւնը սրանց մէջ կատարւում էր ջրով, իսկ լաւ շինւած խճուղիների վրայ աւտոմոբիլներով



Ինձ թւում էր, որ ես գտնւում էի Զւեցարիայի Ժընեվ լճի ափերին և չէի հաւատում աչքերիս։ Հայ ժողովուրդը բազմապատկւել էր և նմանում էր Եւրոպացիների, միայն հայ կանանց հագուստը յիշեցնում էր ինձ անցեալը։ Նրանց գլխի զարդարանքը և ասեղնաւորւած գոգնոցները յիշեցնում էին ինձ առաջւայ ձեռագործները, որոնց վրայ ամիսներով աշխատում էին իրանց օժիտը պատրաստող օրիորդները։ . . .

Բայց ուր են տաճիկները։ Ինչու չեն երևում։ Նրանք չկան, և նրանք հեռացել են Փոքր Ասիայի խորքերը։ Իսկ Քրդերը այստեղ են։ Նրանք խառնւել են հայերի հետ, որովհետև նրանք այժմ զբաղւած են խաղաղ աշխատանքով։ Եւրոպայի քաղաքակրթութիւնը ազդել է և այդ վայրենիների վրայ։ Սակայն, քանի տարի է անցել։ ,,Ինչպէս թէ, քանի տարի, ոչ աւելի քան տարիից։,,Տարօրինակ բան։'' Որքան էլ տարօրինակ է, սակայն այդ այդպէս է։ . . . Մի բան ծակում էր աչքերս, մի բան խանգարում էր ինձ քնելու . . Հազիւ ես կարողացայ աչքերս բանալ, հազիւ ես ուշքի եկայ։ Շատ անախորժ էր բաժանւել այն սքանչելի տեսիլքից։ Այո, այդ բոլորը միայն տեսիլք էր, երազ էր միայն։ Լուսնի կարմիր հսկայ ծիրը բարձրանում էր խաղաղ լճի վրայ, սփռելով իր լոյսը ամենուրէք և կախարդիչ վայր դարձնելով շրջապատը։ ,,Մի տարակուսիր, ասում էր ինձ լուսինը, քո երազը կատարւելու է։ Այդ ամենը այդպէս էլ կլինի, թող միայն մարդիկ կշտանան արիւնով և տիրէ խաղաղութիւնը։ . . .

Ռուսական զօրքերը թողին Վանայ լճի ափերը և նորէն տիրեց տաճկական լծի խաւարը։ . . . Սակայն իմ երազը չէր չքանում իմ յիշողութիւնից։ Տասներկու անգամ ծագեց լուսինը և այդքան անգամ էլ մայր մտաւ այդ դէպքից յետոյ . . . Եւ ահա հեռաւոր անդրովկիանեան աշխարհից լսւեց Վիլսոնի ուժգին ձայնը։ Երկինքը պարզւում է։ ցանկալի խաղաղութիւնը գալիս է և հեռու չէ այն օրը, երբ իմ երազը կատարւելու է . . .

Ռ. ա ք. Բէկգիւլեան։

„Пуб. Библиотека
ССР

# ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ



## ՌՈՍՏՈՎԻ ԵՒ Ն-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԱԶԳ.

Աղաջանեանց Կ. Ս. պրոֆ. Ռոստով Նիկոլսկայ 94.
Հայրապետեանց Գ. Գ. ,, Մեծ Սադովայ 26.
Կոստանդեան Լ. Մ. պրիվ. դոց. ,, Նիկոլսկայա 169.
Քէշիշ Հ. Ս. ,, ,, Նախ. 25 գիծ № 2.
Բուկերշեան Գ. Ս. Ռոստով Դմիտրիևս. 81.
Ծատուրեան Ե. Մ. ,, Մ.- Սադով. 184.
Զուրաբիշեան Պ. Պ. ,, Սոբորնի պեր. 24.
Սալթիկեան Ա. Յ. Նախ. 19 գ. № 10.
Ասվատուրեան Ս. Ա. ,, 26 գ. անկ. Վօզնեսենսկի
Ոսկիղեան Ա. Բ. ,, 14 գ. № 6.
Քեչեճեան Ա. Գ. ,, 1 Սոֆիևսկի 8.
Սրմաքէշեան Յ. Գ. ,, 1 ,, 7.
Դարիբեան Լ. Գ. ,, 30 գիծ 12.
Կոստանդեան Մ. Մ. ,, 26 գիծ 5.
Տրապիզոնցեան ,, 17 գիծ,
Քրիստոստուրեան Ղ. Յ. ,, քաղ. հիւանդան.
Աթայեան Մ. Բ. Նախ 2 Սոֆիևսկի. 14.
Քէշիշ Կ. Ս. ,, 30 գ. 10
Մանուչարեան Ռ. Մ. ,, 22 գ. 13
Պալեան Կ. Թ. ,, 10 գ. 1.
Բուդաղեան ,, 1 Գէորգիևսկի 6
Աստուածատրեան ,, քաղ. հիւանդ.
Խաչկուրուզեան ,, 24 գ. անկ 1 Վօզնես.
Ասատրեան ,, 1 Սոֆիևսկի. № 46
Նազմանեան ,, ,, ,, 20
Զուրիեան Ռոստով մեծ Պրոսպեկտ 16
Իշխանեան Ս. Գ. ,, փոքր Սադով. 68
Ժամկոչեան Գ. Գ. ,, Դմիտրիևսկայա 126-128
Մադլումեան Մ. Ս. ,, Տամերնիկ Լագ. 8
Պալասանեան ,, Սադ.-Պօշտով. 60
Սպանդունեան ,, Կազանսկի պեր. անկ. Պուշկին. 90
Տոնեան Բ. Ն. ,, Պուշտովայա 46
Աղաջանեան Գ. Ս. ,, Նիկոլսկայա 29
Անսեմեար Ա. Ա. Բրատսկի 46
Օվհաննէսեան
Ագասարեան
Ղորդանեան

## ԲԺԻՇԿՈՒՀԻՆԵՐ.

Քեշիկեան Կ. Ս. Նախիջևան 26 գիծ.
Խրիմիկեան-Մեսնիկեան Ռ. Կ. Նախ. 16 գիծ 16
Աֆթանդիլեան-Հերլիմեան Մ. Ղ. ,, 19 գիծ 4
Սալթիկեան-Բէլօնոժկօ Ն. Պ. ,, ,, Տօլստոյի հրապ. 5
Տէր-Գրիգորեան Ս. Պ. ,, ,, 20 գիծ 5
Կացիտյեան-Քեչեճեան Օ. Ի. " ,, 1 Սոֆիևսկի 8
Կատալաշեան ,, ,, 12 գիծ 6
Իշխանեան Ռոստով մեծ Սադով. 68
Քամուրճեան ,, ,, ,, 40
Ոնանեան
Միսաքեան Մ. Ս. ,, ,, 23

# ՑԱՆԿ.


| | երես |
|---|---|
| Ընթերցողներին | 2 |
| Պասեր և շարժական տօներ | 4 |
| Օրացոյց | 5-16 |
| Հայ-Համայնքի կանոնադրութիւն | 17-21 |
| Նախիջ.-Բեսարաբիոյ թեմ | 22-23 |
| Դպրոցներ | 24-25 |
| Բարեգործական հիմնարկութիւններ | 26 |


## ՅՕԴՒԱԾՆԵՐ.


| | |
|---|---|
| Ղրիմի հայեր | 31-35 |
| Մուշի Սբ. Կարապետի վանք | 36-40 |
| Կովկասեան անցքեր | 46-49 |
| Հայաստանի Հանրապետութիւն | 51-56 |
| Վան ու Սևան | 57-59 |
| Վանա ծովի ափին | 59-61 |


## ՆԿԱՐՆԵՐ.


| | |
|---|---|
| Նորին Վեհափառութիւն | 2 |
| Էջմիածին | 27 |
| Ն.-Նախիջևանի մայր եկեղեցի | 28 |
| Հանգստարանի եկեղեցի | 29 |
| Սբ. Խաչ վանք | 30 |
| Ալամդարեանի յուշարձան | 31 |
| Աշխատանքի տուն | 32 |
| Արգինարեր տուն | |
| Գողոյեան իգական գիմնազիա | 33 |
| Մուշի Սբ. Կարապետի վանք | 36 |
| Դետուն | 38 |
| Վարդան վարդապետ | 39 |
| Մուշ քաղաք | 41 |
| Սմբատ եպիսկոպոս | 42 |
| Քեմախի կամուրջ | 43 |
| Բաբերդ քաղաք | 44 |
| Տատախի կանայք | 45 |
| [illegible]ապութականի թաղ. դրօշակ | 50 |




0022074

ՀՀ Ազգային գրադարան
NL0022074

ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

**ԵՂԲ. ՄԵՍՐՈՎԲԵԱՆ**

*ՌՈՍՏՈՎ Դ-Վ. ՄԵԾ. ՍԱԴՕՎՕՅ.* № 38.

*ԱՐԱԳԱՏԻՊ ՏՊԱՐԱՆ։*

*Ընդունում ենք տպագրելու ամեն տեսակի*
*Կարտ-վիզիտներ, Բլանկներ, Հարսանեաց հրաւէրներ,*
*Ծրագիրներ և Յայտարարութիւններ։*

*Նոյնպէս կազմարարական զանազան պատկերներ։*


**4 ռ.**

2013

Հ.Հ. Ազգային գրադարան
NL1967253

4987